

ՏԵՂԵԿԱՏՈՒԻ

DIEGHIEGAIDOU **ديغيجادو**

Հրատարակութիւն Գահիրէի ՀԲԸՄ-ի

نشرة جمعية القاهرة الخيرية الأرمنية العامة



ՆԿԱՐՆԵՐ ԵԳԻՊՏԱՀԱՅ ՊԱՍՔԷԹՊՈԼԻ ՄՐՅԱՇԱՐՔԵՐԷՆ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ԽՄԲԱԳԻՐ
Մարուշ Երամեան

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԽՈՐՀՐԱՏՈՒ
Մարտիկ Պալեան

ՍՐԲԱԳՐԻՉ
ՎԵՐՍՏՈՒԳԻՉ
Անայիս Ճիգմեճեան

ԳԵՂԱՐՈՒԵՍՏԱԿԱՆ
ՁԵՒԱՌՐՈՒՄ
Շահէ Լուսարարեան

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ
Nubar Digital

Գափրեի ՀԲԸՄ-ի
լուրերուն հետեւեցէք
www.agbuegypt.com
կայքէջով:

Ծանօթացէք «Հայաստան
եւ Հայերը Արաբական
Մամուլին մէջ. 1876-1923»
հաւաքածոյի նիւթերուն
www.arminmedia.com
կայքէջով:

«Տեղեկատու»ի յօդուածա-
գիրներուն արտայայտած
կարծիքները անպայման-
օրէն չեն ներկայացներ
Գափրեի ՀԲԸՄի պաշտո-
նական տեսակէտները:

ԹԻԻ 117 ՆՈՐ ՇՐՋԱՆ,
ՀՈԿՏԵՄԲԵՐ 2025

Խմբագրական Մտորումներ	1
Զսպուածութեան եւ Միասնականութեան կոչ	2
Կիզակէտ	3
«Տոհմիկ Օր»	8
Ողջերթ Աննա Թրայեան-Տոլապճեանին	10
ՀԲԸՄիութեան Երիտասարդ Արհեստավարժները	11
Զոյգ Ամեակներ	15
«Ջահակիր»ը Նոր Ձեւաչափով	17
Վաղեմի կեանքը լուսանկարներով	17
Եգիպտահայ նկարիչներ ի պատուի	18
Մատենագիտական Ցանկ - Նուպար 200	19
Մեր Կորուստները՝ Ռոպէր Հատտէճեան	20
Մտքի Օճապտոյտ Թռիչքներ Սօսի Ներքերեան-Յակոբեան	25
Վստահութեան Արարք Մը	27
Հայաստանի Արեւոտ Գիւղերը	27
Կարճ Լուրեր	28
Աղեքսանդրիոյ Կամքի Մրցաշարքը Սօսի Ներքերեան-Յակոբեան	33
Գիրքերու Քաղաք	34
Հ.Մ.Ը.Մ. Արարատի տարեկան մրցաշարքը Սօսի Ներքերեան-Յակոբեան	35
ՀՄԸՄ ՆՈՒՊԱՐԻ տարեկան մրցաշարքը Սօսի Ներքերեան-Յակոբեան	37
Անդամական	40
Շնորհակալութիւն	40



ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ՄՏՈՐՈՒՄՆԵՐ

Կեանքը անգամ մը եւս իր հոլովոյթը ամբողջացուց – դպրոցական տարեշրջանի մը ձեւով – եւ վերսկսաւ աշուն, վերամուտ, զգաստութեան հրաւեր:

Եգիպտահայ կեանքն իր գործունէութեան հերթական փուլը յառաջ կը տանի, Եգիպտահայ Պասքէթպոլի մրցաշարքերով, որոնք Հոկտեմբեր ամսուն վերջ գտան Հ.Մ.Ը.Մ. Արարատի եւ ՀՄԸՄ ՆՈՒՊԱՐԻ մրցաշարքերով:

Աշխարհը շունչը բռնած կը սպասէ. ինչի՞ ընդհանրապէս լաւ բաներու, որոնց յոյսը մարդ արարածը բնաւ չի կորսնցնէր բարեբախտաբար: Մէկ կողմէ Կազայի պատերազմին դադարումը յոյս կը ներշնչէ, միւս կողմէ սակայն հայ գերիներուն շուրջ շարունակուող լռութիւնը մեր Հայաստանէն ներս թէ դուրս գտնուող հայերու բարկութիւնը իր գագաթնակէտին կը հասցնէ. մեր ամբողջ պատմութեան երկայնքին թշնամիին հանդէպ այսքան քծնանքի չենք հանդիպած, մասնաւորապէս երբ պարագաները կը թոյլատրեն, որ աւելի պահանջկոտ ըլլանք, երբ զիջեր ենք մեծագոյնը՝ հող հայրենին: Եւ կը սպասենք, չուզելով հաւատալ, որ հայ մարդը – ո՞վ որ ալ ըլլայ ան, ի՞նչ հանգամանք ալ ունենայ – կրնայ այս կացութեան մէջ դնել ինքզինք, եւ մեզ, որպէս ազգ:

Գահիրէի Գալուստեան-Նուպարեան վարժարանը փոփոխութիւններու ընդառաջ կ'երթայ. կը մաղթենք որ այդ փոփոխութիւնները դէպի լաւագոյնը տանին եւ միայն դրական արդիւնքներ ունենան աշակերտութեան համար մասնաւորապէս, եւ եգիպտահայութեան համար՝ ընդհանրապէս: Այս առիթով կը շնորհաւորենք դպրոցին նորանշանակ տնօրէնը՝ դոկտ. Գեորգ Գազանճեանը, կանաչ ճանապարհ մաղթելով իրեն:

Գաղութը ողջերթ մաղթեց իր անդամներէն մէկուն, որ 40 տարի առաջ եկեր էր Գահիրէ, որպէս հարսը այժմ ողբացեալ Գեղամ Թրայեանին: Իր շէնշող բնաւորութեամբ եւ օգնելու պատրաստակամութեամբ Աննա Տոլապճեան-Թրայեանը դարձեր էր գաղութի սիրելի անդամներէն մէկը: Ամենայն բարիք

կը մաղթենք Աննային, իր կեանքին այս նոր հանգրուանին:

Ամբողջ հայութիւնը, մասնաւորաբար Սփիւքն ու պոլսահայ գաղութը կորսնցուցին մեծ խմբագրապետ մը՝ Ռոպէր Հատտէճեանը, որուն մասին կրնաք կարդալ «Տեղեկատու»ի այս համարին մէջ:

Գաղութի ծանօթ եւ սիրուած անդամուհիներէն տիկին Քրիստին Չաքրճեան-Վարվառեանի երախտագիտական կեցուածքով մը երկրին հանդէպ, 5 գեղանկարներ եւ 2 Խեցեգործական աշխատանք նուիրեր է երկրին, որուն համար ստացեր է Եգիպտոսի վարչապետին գնահատականը: Ազնիւ կեցուածք հիւրընկալ երկրի մը հանդէպ, որ դարձեր է մեր երկրորդ հայրենիքը:

Գաղութի անդամներէն Սօսի Ներեւեան-Յակոբեան անգամ մը եւս ուրախութիւն կը պատճառէ մեզի իր գողտրիկ պատմութիւններով, որոնք կը բեւեռուին եգիպտահայ եւ եգիպտացի մարդոց առօրեային վրայ: Մեծապէս կը գնահատենք Սօսիին երգիծանքի նուրբ ջիղը, որ իր գրութիւնները կը համեմէ, ընթերցողը խանդավառելով:

Միութեանս Աղաթօն գրադարանը դարձեր է վստահութիւն ներշնչող եւ բոլոր գիրքերուն համար փրկարար վայր մը, որուն մէջ մասնաւոր տեղ կը գրաւեն Գահիրէ եւ Աղեքսանդրիա հրատարակուած եւ 1900-էն առաջ յոյս տեսած թանկարժէք հատորները:


Մեր բուն փափաքն է եւ տեսլականը, որ ՀԲԸՄիութեան Գահիրէի Մասնաճիւղի Աղաթօն գրադարանը դառնայ կարելորդ եւ ամբողջական աղբիւր մը Եգիպտոսի պատմութեան մասին գրուած հայերէն գիրքերու, եգիպտահայ գաղութին մասին գրուած հայերէն թէ արաբերէն գիրքերու, եւ մեր նոր շրջանի պատմութեան ամենէն ծանր ժամանակաշրջանին մասին օտար գրագէտներու կողմէ գրուած տարբեր լեզուներով գիրքերու, որոնցմէ կարելորդ մաս մը ունինք արդէն:

Բարի վերամուտ մեր աշակերտներուն եւ ուսանողներուն, եւ խաղաղ ու տաքուկ ձմեռ մը կը մաղթենք բոլորին:



ԶՄՊՈՒԱԾՈՒԹԵԱՆ ԵՒ ՄԻԱՄՆԱԿԱՆՈՒԹԵԱՆ ԿՈՉ

ՀԲԸՄ-ի Կեդրոնական Վարչությունը խոր մտահոգությամբ կը հետեւի Հայաստանի մէջ տեղի ունեցող իրադարձութիւններուն, մասնաւորաբար երկու հիմնական կառոյցներուն՝ Պետութեան եւ Եկեղեցւոյ միջեւ սուր բնոյթ ստացող իրավիճակին: Կառոյցներ, որոնք հայ սփիւռքին առնչութեամբ առանցքային դեր ունին մեր ազգային գոյատեւումին համար:



ՀԲԸՄ-ը կրկին անգամ զսպուածութեան եւ ազգային միասնականութեան կոչ կ'ուղղէ: Ինչպէս բազմիցս նշած ենք, անհրաժեշտ է յարգել Հայաստանի Հանրապետութեան Սահմանադրութիւնը եւ ժողովրդավարական գործընթացը, ինչպէս եւ Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցւոյ ինքնավար կառոյցը, քաղաքականութիւնը եւ կանոնադրութիւնը, նկատի ունենալով, որ ան աւելի քան 1700 տարիներ, եղած է հայ ինքնութեան անսասան հիմնասիւնը:

Իր հիմնադրութենէն ի վեր, ՀԲԸՄ-ը մեր ազգի պատմութեան վճռորոշ պահերուն, միշտ, յստակ կեցուածք ցուցաբերած է բարոյական սկզբունքներու վերաբերեալ, անկախ այն իրականութենէն թէ Հայաստանը եղած է անկախ պետութիւն, թէ միջազգային սահմաններ չունեցող երկիր՝ ենթակայ օսմանեան տիրապետութեան կամ խորհրդային կարգերու:

Այս վճռորոշ պահուն, աշխարհագրական անորոշութիւններու այս պայմաններուն տակ, անհրաժեշտ է որ մեր ազգային բոլոր հաստատութիւն-

ները մնան հաստատ եւ կարենան պատշաճ կերպով կատարել իրենց դերը: Մինչ մեր կառավարութիւնը կը փորձէ առաջնորդել մեր տակաւին երիտասարդ ժողովրդավարութիւնը, հաւասարակշռելով անվտանգութեան, բարեփոխումներու եւ հասարակական ներդաշնակութեան վերաբերեալ խնդիրները, մեր Եկեղեցին կը

շարունակէ իր կենսական պատմական առաքելութիւնը՝ պահպանելով մեր ինքնութիւնը, ժառանգութիւնն ու հաւատքը:

Որեւէ գործողութիւն, որ կը տկարացնէ Պետութեան կամ Եկեղեցւոյ առաքելութիւնը իրականացնելու կարողութիւնը, ներառեալ՝ եպիսկոպոսներու եւ քահանաներու ձերբակալութիւններն ու Ամենայն Հայոց Կաթողիկոսի հասցէին հնչեցուած սպառնալիքները, նաեւ կը վտանգէ մեր ազգի ամբողջութիւնը թէ՛ երկրէն ներս թէ՛ միջազգային հարթակներու վրայ:

Մեր ազգին եւ ժողովուրդին համար հնարաւորութիւններով եւ վտանգներով յատկանշուող այս բախտորոշ պահուն, աւելի քան երբեք՝ կարեւոր է որ մեր ազգային կարեւորագոյն կառոյցները հզօրացուին եւ ոչ թէ քանդուին, որպէսզի անոնցմէ իւրաքանչիւրը կարենայ կատարել իր դերը մեր ազգի յառաջդիմութեան համար:

ՀԲԸՄ-ը միշտ կը ոգեշնչուի իր հիմնադիրներու կարգախօսով՝ «ՄԻՈՒԹԻՒՆԸ ԶՕՐՈՒԹԻՒՆ Է»:

ՀԱՐԱՄ ԿԻՋԱԿԷՏ 2025

Երեւանի Հանդիպումը

Կը Շեշտէ Սփիւռք-Հայրենիք Միութեան Արժէքը

ՀԱՐԱՄ-ի ԿԻՋԱԿԷՏ 2025 համաշխարհային գագաթնաժողովը որ Յուլիս 16-20-ին առաջին անգամ ըլլալով կը կայանար Հայաստանի մէջ, հանգրուանային կարեւոր նախընթաց մը հանդիսացաւ: Հնգօրեայ համագումարը 600 Երիտասարդ Արիեստավարժներ համախմբեց, 28 երկիրներէ, որոնց շարքին՝ Արժանթին, Պրագիլ, Գանատա, Չինաստան, Եգիպտոս, Ֆրանսա, Վրաստան, Գերմանիա, Ճաբոն, Լիբանան, Սպանիա եւ Միացեալ Նահանգներ:

ԿԻՋԱԿԷՏ-ի գլխաւոր նպատակն է հասարակաց հետաքրքրութիւններու շուրջ համախմբել հայ երիտասարդ արիեստավարժներ: Երիտասարդ Արիեստավարժներու շարժումի Ընդհանուր Տնօրէն Քրիսթինա Լալամա-Նաբբի կը նշէ՝ «ԿԻՋԱԿԷՏ-ի գաղափարը կը զատորոշուի այն առումով, որ ան ծրագրուած ու կազմակերպուած է երիտասարդ արիեստավարժներու կողմէ: 2001-ին իր մեկնարկէն ի վեր, տեղական Երիտասարդ Արիեստավարժներու խումբ մը, ՀԱՐԱՄ-ի Կեդրոնական Գրասենեակին աջակցութեամբ, կը ստանձնէ անոր նախաձեռնութիւնը եւ կազմակերպումը համաշխարհային ծաւալով: Անիկա բացառիկ առիթ մըն է անոնց մօտ ինքնավստահութիւն եւ կազմակերպչական կարողութիւններ զարգացնելու, նաեւ ծրագիրներ մշակելու, որոնք կը ցոլացնեն իրենց զգայնութիւնները, մտահոգութիւնները եւ աշխարհիկ ձգտումները:»

Հետեւաբար, ԿԻՋԱԿԷՏ-ի իւրաքանչիւր գա-

գաթնաժողով կը նպաստէ Երիտասարդ Արիեստավարժներու համընդհանուր շարժումի ուժեղացման: Մասնակիցներ հետզհետէ աճող թիւերով կը համախմբուին, վայելելու իրենց մշակութային հարուստ ժառանգութիւնը եւ հպարտանալու իրենց ինքնութեամբ: Միաժամանակ, անոնք իրենց ճիգերու համադրումով նպատակադրուած հասութեաբեր ձեռնարկներ կ'իրականացնեն: Այս տարի աւելի քան 180,000 ամերիկեան տոլարի գումար մը գոյացաւ ի նպաստ Կրթաթոշակներու Ծրագրին: ԿԻՋԱԿԷՏ 2025-ի գլխաւոր հովանաւորները՝ Ուիլիլմ եւ Քարօլին Նազարեան, Նիքըլըս Նազարեան, Հայաստանի մէջ գործող **Ֆրիպըմ Պրոքըր Արմինիա, Զուլալ Ուայնզ, Բիքսար**, ճարտարագիտական ընկերութիւններ՝ **ՃօՊլօ, Ուան Բիլլօ**, անձնական եւ հանրային մարզի կազմակերպութիւններ եւ Երիտասարդ Արիեստավարժներու խմբաւորումներ, իրենց նիւթական աջակցութեամբ կարելի դարձուցին բազմաթիւ ծրագիրներով հարուստ այս փայլուն նախաձեռնութեան իրականա-





ցումը:

Բազմաթիւ մասնակիցներ, որոնցմէ շատերը առաջին անգամ ըլլալով կ'այցելէին Հայաստան, առիթը ունեցան վայելելու Երեւանի ջերմ եւ կենսունակ մթնոլորտը, ծանօթանալու ՀԲԸՄ-ի բնորոշ նախաձեռնութիւններուն, հանդիպելու այդ ծրագիրներու մասնակիցներուն, բաժին բերելու ընկերային ծառայութեան աշխատանքերու, հետախուզելու քաղաքի մշակութային հարուստ շրջապատը, նաեւ տպաւորութիւններ փոխանակելու Հայաստան-Սփիւռք յարաբերութիւններու կապակցութեամբ, Հայաստանի անկախութեան անցնող 35 տարիներու լոյսին տակ:

Ձերմ Բարեգալուստ

Առաջին օրը սկսաւ բարեգալուստի հաւաքոյթով, Հայաստանի ՀԲԸՄ-ի կեդրոնի շրջափակին մէջ, ուր ներկաները դիմաւորուեցան Միութեան Հայաստանի ղեկավարութեան կողմէ: Ներկայ էին Նախագահ Վազգէն Եագուպեան, Վարիչ Տնօրէն Մարինա Մխիթարեան եւ Հայաստանի երիտասարդ Արհեստավարժներու Խումբի Ատենապետ Հայկազ Նահապետեան: ՀԲԸՄ-ի Հայաստանի գրասենեակի եւ Նիւ Եորքի Կեդրոնական գրասենեակի պաշտօնէութեան ինչպէս նաեւ կազմակերպիչ յանձնախումբի կամաւորներու համագործակցութեամբ, կարելի եղաւ ապահովել գագաթնաժողովի արտակարգ յաջողութիւնը:

Նախագահ Վազգէն Եագուպեան իր խօսքին մէջ արտայայտելով հաւաքոյթի ջերմ մթնոլորտը բնորոշող ոգին, բարեգալուստ մաղթեց ներկաներուն իրենց հայրենիքին մէջ, յորդորելով որ անոնք սերտ կապեր մշակեն: «Ձեր այստեղ կեցութեան ընթացքին, մինչ կ'ըմբռնէք բժախնդրութեամբ ծրագրուած հնգօրեայ ճոխ յայտագիրը, նոր բարեկամութիւններ հաստատեցէք, խորհրդակցեցէք ձեզի գործակից երիտասարդ Արհեստավարժներու հետ ծրագիրներու շուրջ, որոնք կրնան զօրացնել մեր երկիրը: Որովհե-



տեւ պատմական խոր արմատներ ունեցող եւ մեր ինքնութեան խարիսխը հանդիսացող հայրենիքով կը զօրանան Սփիւռքը եւ մեր ազգը՝ որով բոլորս կը հպարտանանք: Միասնաբար կերտենք մեր պատմութիւնը, արիւթեամբ եւ ստեղծարար ոգիով, որովհետեւ Միութիւնը Զօրութիւն է:»

Ընդունելութեան յայտագրին մաս կազմեցին ՀԲԸՄ-ի Հայորդաց Տան պատանիները ժողովրդային պարերով, որմէ ետք ներկաներէն ոմանք մասնակցեցան հայկական պարերու դասընթացի մը, մինչ ուրիշներ շրջայցեր կատարեցին Երեւանի տեսարժան վայրեր, ինչպէս Հայաստանի Հանրապետութեան խորհրդարան, Գեղարուեստի Ցուցասրահ, եւ Ժամացոյցի Գործարան, ուր պաստառային տպագրութեան ցուցադրութիւն մը ներկայացուեցաւ անոնց: Հայաստանի Ազգային Ակադեմական Թատրոնի եւ Օփերայի տանիքէն անոնք ականատես եղան Երեւանի տպաւորիչ համայնապատկերին, այցելելով նաեւ Պատմութեան Թանգարան, Հայաստանի Ազգային Ցուցասրահ եւ Երեւանի քաղաքապետարան, ուր անոնք հիւրընկալուեցան Քաղաքապետ Տիգրան Աւինեանի կողմէ:

Այց Էջմիածին

Երիտասարդ Արհեստավարժներու Գործադիր Մարմնի հանդիպումը 60 մասնակիցներով, տեղի ունեցաւ Էջմիածին, Վաչէ եւ Թամար Մանուկեան Մատենադարանի սրահին մէջ: Ժողովը կեդ-

րոնացաւ Երիտասարդ Արհեստավարժներու գործունէութիւնը, վարչական թէ գաղափարական առումներով, աւելի արդիւնաւոր եւ ներառական դարձնելու նիւթին վրայ, միաժամանակ Երիտասարդ Արհեստավարժներու խումբերուն եւ իրենց համայնքներուն միջեւ յարաբերութիւնները աշխուժացնելու ուղղութեամբ:

Ժողովին յաջորդեց յատուկ լսարան մը Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Գերագոյն Պատրիարք եւ Կաթողիկոս Ամենայն Հայոց Վեհափառ Տէր, Ընկերակցութեամբ Նաթան Արքեպիսկոպոս Յովհաննիսեանի եւ Միութեան Հայաստանի Նախագահ Վազգէն Եագուպեանի: Վեհափառը իր խորհրդածութիւնները փոխանցեց ՀԲԸՄ-ի եւ Եկեղեցւոյ միջեւ սերտ յարաբերութիւններուն եւ Միութեան կողմէ Մայր Աթոռին եւ Սփիւռքին ցուցաբերուած նշանակելի զօրակցութեան շուրջ: Ան նաեւ յոյս յատնեց, որ հայրենիք այցելութիւնները Երիտասարդներուն մօտ զօրացնեն հոգեւոր արժէքներու եւ ազգային աւանդութիւններու նկատմամբ գիտակցութիւնը եւ ՀԲԸՄ-ի առաջնորդներու եւ վարչականներու օրինակով՝ զանոնք մղեն աշխատանքներու որոնք կը հզօրացնեն հայրենի պետութիւնը եւ պետականութիւնը: Վեհափառը նաեւ պատասխանեց հարցումներու, որոնք կը վերաբերէին եկեղեցւոյ կեանքէն ներս Երիտասարդներու դերին, հոգեւորականներու պատրաստութեան եւ հայրենիքի դիմագրաւած մարտահրաւերներուն:

Ասոր զուգահեռ, ԿԻԶԱԿԷՏ-ի 150 մասնակիցներ շրջայց մը կատարեցին Էջմիածինի մէջ, ծանօթանալով ազգային հոգեւոր գանձերու, ինչպէս Էջմիածնի Մայր Տաճարը, 125-րդ Կաթողիկոս Մկրտիչ Ա. Խրիմեանի եւ Պարոյր Սեւակի թանգարանները, վերանորոգ Հին Վեհարանը եւ Ալէքս եւ Մարի Մանուկեան Գանձատուն-Թանգարանը:

Մեկնարկ Համաժողով

Որպէս ԿԻԶԱԿԷՏ-ի յայտագրի մեկնարկ, *Տեսադաշտեր (Perspectives)* համա-



ժողովին մասնակցող միջազգային մասնագէտներ, անդրադարձան «Երկու Աշխարհներու Միջեւ – Տեսադաշտերու Կամրջում եւ Ապագայի Զեւաւորում» խորագրով ընդհանուր քննարկումներուն: Կամաժողովը կայացաւ Երեւանի Կոմիտասի պատմական թանգարանի սրահին մէջ: Կը մասնակցէին՝ Քրիստինա Այանեան, NASDAQ-ի յարաբերութեանց առաջնորդ (Նիւ Եորք, ԱՄՆ), Պարսելոնայի (Սպանիա) Երիտասարդ Արհեստավարժներու Ատենապետ Լեւոն Գրիգորեան (Banking and Finance Partner at Crowe), Եգիպտագէտ Արթո Պըլըքտանեան (Գահիրէ, Եգիպտոս) եւ Նիւ Եորք ապրող յայտնի դիմանկարիչ Տիգրան Տիթողեան: Կամաժողովը կը վարէր՝ հաղորդակցութեանց մասնագէտ Ալէքսանտր Փլէյթո Յակոբեան (Երեւան): Մասնակիցները քննարկեցին հայկական ինքնութեան զարգացող ըմբռնումները, քաղաքացիութեան եւ հայկական համայնքային պատկանելութեան միջեւ խուսանաւումը, Հայրենիքին դրապէս սատարելու սահմանումները, ինչպէս նաեւ տարբեր համայնքներու կարողականութիւնը Հայաստանի ի նպաստ կայուն ներդրումի վերածելու կարելիութիւնները:

Համաժողովի խօսակցութիւնները շարունակուեցան Թանգարանի գեղատեսիլ այգիին մէջ, ուր ներկաները ըմբռնեցին «Զուլալ Գինիներ»ու կողմէ տրամադրուած գինիի տեսականին: Մասնակիցները նաեւ վայելեցին պարային կատարողութիւն մը ART ALIVE-ի կողմէ, որ



կեանքի կը կոչէ հայ ժողովրդական արուեստագէտ Մինաս Աւետիսեանի եւ ֆրանսահայ արուեստագէտ Գարգուի գեղանկարչական գործերը:

ՀԲԸՄ-ի Նախաձեռնութիւններու Օր

Մասնակիցները նախ ծանօթացան Հայաստանի մէջ ՀԲԸՄ-ի կողմէ իրագործուած նախաձեռնութիւններուն եւ անոնց բարերար դերին: Ապա անոնք առիթը ունեցան տեսնելու այդ ներդրումներու արդիւնքը՝ Մարիօթ Պանդոկէն ներս կայացած ՀԲԸՄ-ի Խորհրդատուական Ծառայութիւններու Ցուցահանդէսի ընթացքին, հանդիպելով այդ ծառայութիւններու շահառուներուն եւ ականատես ըլլալով անոնց տրամադրուած աջակցութեան, աշխարհի տարբեր կողմերէն իրենց փորձառութիւնը բաժնող մասնագէտներու միջոցաւ: Այդ ծրագիրներու շարքին էին ՀԲԸՄ-ի Կին Գործարարներու (Women Entrepreneurs), Կին Ծրագրաւորողներու (Women Coders) եւ Սորվիր Վաստկելու Համար Արցախ (Learn to Earn Artsakh – LEAP) նախաձեռնութիւնները, ՀԲԸՄ-ի Խորհրդատուներու մասնակցութեամբ: Կարծիքներու փոխանակումները եւ քննարկումները որոնք յաջորդեցին ձեռնարկին, գործնական հայեցողութիւն ձեռք բերելու, գործարարական նոր գաղափարներու ծանօթանալու եւ գործակցական յարաբերութիւններ մշակելու արժէքաւոր առիթ ընձեռեցին մասնակիցներուն, յատկապէս ռազմավարական ծրագրումի, թուայնական նորարարութեան եւ Արուեստական Բանականութեան ասպարէզներու մէջ:

Ծրագրի շահառուներէն մին որ Հայաստան հաստատուած էր, նշեց՝ «Մենք խորապէս տպաւորուած ենք տեսնելով անձիք, որոնք իրենց ասպարէզները կառուցած են Սփիւռքի մէջ, եկած են հոս բաժնելու իրենց արհեստավարժութիւնը եւ գիտութիւնը: Խորապէս ներշնչող է տեսնել թէ ինչպէս ՀԲԸՄ-ը նման առիթներ կ'ընձեռէ իր ծրագիրներու շահառուներուն:

Յաջորդ հանգրուանը այցելութիւն մըն էր Մալաթիա թաղամասի վերանորոգուած Հայորդեայց Տան, որ ՀԲԸՄ-ի դաստիարակչական կեդրոններէն մին է: Այցելուները միասին բերած էին 200 երիտասարդ Արհեստավարժներու կողմէ պատրաստուած առողջապահական իրերու 300 ծրարներ եւ 500 դպրոցական պայուսակներ գրենական անհրաժեշտ պիտոյքներով՝ Արցախի աշակերտներուն համար: Անոնք նաեւ կեդրոնի շրջակայքը 720 ծառեր տնկեցին: Ծառատունկերը տրամադրուած էին Հայաստանի Ծառի Ծրագրին կողմէ: Աւելի քան 25 տարիներէ ի վեր, ՀԲԸՄ-ի եւ Էջմիածինի համագործակցութեամբ այս կեդրոնները՝ Նորք, Մալաթիա եւ Արաբկիր թաղամասերուն մէջ, դպրոցական ժամերէն ետք արուեստի դասընթացքներ կ'ապահովեն տարեկան շուրջ 1700 պատանիներու:

FOCUS եւ Արուեստ

Երեւանի մշակութային հարուստ կեանքի բազմապիսի դրսեւորումները աննախընթաց վայելքի պահեր ապահովեցին Երիտասարդ Արհեստավարժներու Գագաթնաժողովի մասնակիցներուն: Այցելութիւններու շարքը կը սկսէր Մատենադարանի Հին Ձեռագիրներու Ուսումնասիրութիւններու Կեդրոնէն, որ երկար ատենէ ի վեր կը վայելէ ՀԲԸՄ-ի աջակցութիւնը: Այցելութեան ընթացքին անոնք շրջեցան Մատենադարանի տարբեր բաժինները եւ ծանօթացան մագաղաթներու պահպանումի եւ նորոգութեան, ինչպէս նաեւ միջնադարեան մանրանկարչութեան մէջ օգտագործուած հռչակաւոր Որդան Կարմիր ներկի պատրաստութեան աշխատանքներուն:

Մշակութային փորձառութիւններու շարքին մաս կը կազմէին՝ Կերոն եւ Հոսք Զարգացման Հիմնարկները, երիտասարդ արուեստագէտներու եւ նախագծողներու ԹՈՒՄՕ ստեղծագործական ճարտարարուեստներու աշխատանոցները, Արտիէրն Տիզայնզ, որ հայ աւանդական մոթիֆներու արդիական վերարտադրութեան կեդրոն մըն է, եւ ի վերջոյ՝



Մէլոնքէն Փուռ-Խանութը, որ հայկական աւանդական խմորեղէններ կը հրամցնէ ճաթոնական քաղցրահացի պատրաստութեան հետեւողութեամբ: Հիւրերը աւելի ուշ ներկայ գտնուեցան լիբանանահայ արուեստագէտ Սարին Սէմէրճեանի պարի ելոյթին, Միքայէլ Ոսկանեանի հայկական թառի մենակատարութեան ընկերակցութեամբ:

Շրահանդէս երեկոյ

ԿԻՋԱԿԷՏ 2025-ի եզրափակիչ գագաթնակէտը տեղի ունեցաւ Դուին Երաժշտասրահին մէջ, 525 հիւրերու մասնակցութեամբ: ԿԻՋԱԿԷՏ ԿԱԼԱ-ի հանդիսավար Լիա Եղոյանցի ղեկավարութեամբ ստեղծուած գերաշխոյժ մթնոլորտին մէջ, ոգեշնչող ելոյթներ ունեցան Նախագահ Սէմ Սիմոնեան, ՀԲԸՄ-ի Կեդրոնական Վարչութեան անդամ Քամիլիօ Ազգուզ եւ Երեւանի Երիտասարդ Արհեստավարժներու ատենապետ Հայկազ Նահապետեան եւ ՀԲԸՄ-ի կրթաթոշակառու Յովսէփ Պատուականեան:

Անդրադառնալով ապագայ երիտասարդ առաջնորդներու պատրաստութեան ուղղութեամբ ԿԻՋԱԿԷՏ-ի գագաթնաժողովներու դրական ազդեցութեան, Նախագահ Սէմ Սիմոնեան, որ շրջանավարտ է ՀԲԸՄ-ի դպրոցներէն եւ կրթաթոշակառու, խօսեցաւ ընդհանրապէս Միութեան աշխարհատարած ազդեցութեան մասին: «Մենք բոլորս հպարտ ենք մեր ինքնութեան պահպանումին ուղղութեամբ ՀԲԸՄ-ի շրջանակներու կատարած հսկայածաւալ աշխատանքով: Մենք բոլորս ապրող փաստն ենք այդ տեսիլքին... Եկէք այս գիշեր տօնախմբենք Միութեան իրականացուցած վիթխարի դերակատարութիւնը Հայաստանի մէջ՝ մարդասիրական, կրթական, մշակութային եւ տնտեսական-հասարակական զարգացման ուղղութիւններով, շրջանային նախագահ եւ մեր սիրելի բարեկամ Վազգէն Եագուպեանի առաջնորդութեամբ: Մեր Միութեան համայնական կառոյցը, ապաքաղաքական կողմնորոշումը եւ ֆինանսական թափանցիկութիւնը, մեր հզօրութեան բաղկացուցիչները եղած են 1906-էն ի վեր:»

Երիտասարդ Արհեստավարժներու Երեւանի Ատենապետ Հայկազ Նահապետեան շնորհակալութեան խօսք ուղղեց բոլոր անոնց, որոնք բաժին բերած էին ԿԻՋԱԿԷՏ 2025-ի յաջողութեան, Կազմակերպիչ Յանձնախումբին, Կեդրոնական եւ Հայաստանի գրասենեակներու պաշտօնէութեան եւ մասնակիցներուն, որոնք եկած էին երկար ճամբորդութիւններ կատարելով: «Ասիկա պարզապէս շրահանդէսի երեկոյ մը չէ, այլ յայտարարութիւն մը՝ որ մեր հայրենիքը մեր հայ իրկանութեան կորիզն է», ըսաւ ան: «Երեւանի Երիտասարդ Արհեստավարժներու Խումբը ինչպէս հին եւ նոր բոլոր խումբերը աշխարհի տարածքին, տարիներու ընթացքին ընդարձակած է արհեստավարժներու իր ցանցը: Մեր ձգտումն է կարելի ամէն առիթով հզօրացնել այս ցանցը եկող տարիներուն...»

«Տարօնցիներ» պարախումբը աշխուժացուց երեկոն ժողովրդային կատարողութիւններով, հրաւիրելով նաեւ մասնակիցները մաս կազմելու պարային ելոյթներուն: Երեկոն շարունակուեցաւ **Տը Ուէյ Էնփ Րիլէքս** նուագախումբի ժողովրդային գործիքներու եւ արդիական եղանակներու համադրումով ստեղծած խանդավառ մթնոլորտով, որուն ընթացքին բարեկամական ջերմ կապերը շարունակեցին ամրապնդուիլ պահի ստեղծած անմոռանալի տպաւորութիւններով:

ԿԻՋԱԿԷՏ 2025-ը 12-րդն է երկամեայ գագաթնաժողովներու շարքին, որոնք իրականացած են անցնող տարիներուն տարբեր քաղաքներու մէջ, Նիւ Եորք (2001, 2007), Մայէմի (2005), Շիքալօ (2009), Փարիզ (2011), Սան Ֆրանսիսքօ (2013), Թօրօնթօ (2015), Պէյրութ (2017), Սան Փաուլօ (2019), Մատրիտ (2023): Յաջորդ գագաթնաժողովը տեղի պիտի ունենայ 2027-ին, վայրը պիտի որոշուի հետագային:

Լուսանկարներու համար այցելել՝
<https://agbu.org/focus-2025-gallery>.



«ՏՈՀՄԻԿ ՕՐ»

Երեքշաբթի, 5 Օգոստոս 2025-ի յետմիջօրէին Գահիրէի ՀԲԸՄիութեան Տեղական Մասնաճիւղի «Երուանդ Գ. Աղաթօն գրադարան»ը ընդունեց այցելութիւնը նախկին եգիպտահայ, թորոնթօքնակ Արշօ Զաքարեանին, որ քաղաքս կը գտնուէր կարգ մը դասաւորումներ ընելու արդէն աւանդութիւն դարձած «Տոհմիկ Օր»ուան համար, որուն յաջորդ ձեռնարկը՝ ընթացիկ տարուան Նոյեմբերին, նուիրուած պիտի ըլլայ Եգիպտոսի, Սուտանի եւ Եթովպիոյ գաղութներուն:

Տիկին Արշօ Զաքարեան ատենապետուհին է Թորոնթոյի ՀՕՄԻ «Տոհմիկ Օր»երու յանձնախումբին եւ Համազգային Կրթական եւ Մշակութային Ընկերակցութեան Գրատարած Յանձնախումբին:

«Տոհմիկ Օր»ը Թորոնթոյի Հայ Օգնութեան Միութեան (ՀՕՄ) Ռուբինա մասնաճիւղին տարեկան ձեռնարկներէն մէկն է, որ սկսեր է 1994-ին: Եգիպտահայ գաղութին նուիրուած ձեռնարկը պիտի ըլլայ 31րդը այս գեղեցիկ ծրագրի շարքին:

Այս ձեռնարկները ընդհանրապէս կ'երկարին շաբաթավերջի մը երկու օրերուն վրայ եւ կ'ունենան ցուցահանդէս, դասախօսութիւն եւ խրախճանք, որուն ընթացքին յաճախ տեսերիզի ցուցադրութիւն եւս տեղի կ'ունենայ: Երկրորդ՝ Կիրակի օրը կը սկսի սուրբ եւ անմահ պատարագով եւ տուեալ գաւառին կամ գաղութին զոհուած կամ մահացած անդամներուն համար հոգեհանգստեան պաշտօնով:

Ամենէն կարեւորը սակայն իրաքանչիւր գաւառի կամ գաղութի նուիրուած հատորն է, որ կ'ընդգրկէ գաղութին անցեալի պատմութիւնն ու ներկայի կացութիւնը, կը ներկայացնէ ընկերային, մշակութային եւ գեղարուեստական կեանքը, եւ բազմաթիւ լուսանկարներով կը հաստատէ այդ բոլորը, դառնալով պատմական կարեւոր աղբիւր մը: Այդ հատորները կը բաժնուին ներկաներուն եւ կը ղրկուին այն բոլոր անհատներուն, հաս-



տատութիւններուն եւ միութիւններուն, որոնք իրենց ներդրումը ունեցած են ձեռնարկին յաջողութեան մէջ, եւ որոնք, տարբեր պատճառներով չեն կրցած ներկայ գտնուիլ ձեռնարկին: Վերջին՝ Իրաքի գաղութին նուիրուած հատորը կը հաշուէր 452 մեծածաւալ էջ...

Կը յիշեմ, որ վաղուց, նախքան որ ներքին եւ արտաքին պատերազմները հովին տային Լիբանանի եւ Սուրիոյ բարգաւաճ գաղութները եւ տարտղնէին հոն ապրող հայերը, Պէյրութի եւ Հալէպի մէջ եւս, Համազգային Կրթական եւ Մշակութային Ընկերակցութեան կողմէ «Տոհմիկ Օր»եր կը կազմակերպուէին, որոնց կ'ընկերանար տուեալ գաւառին ուսեստը ներկայացնող փոքր խոհագիրք մը: Հալէպի մէջ Այնթապի եւ Տիգրանակերտի նուիրուած «Տոհմիկ Օր»երը մեծ խանդավառութիւն ստեղծած էին ատենին:

Վերջին՝ Իրաքի նուիրուած «Տոհմիկ Օր»ուան առիթով կատարուած հարցազրոյցի մը ընթացքին, յանձնախումբի ատենապետուհի Հուրի Նաճարեան, խօսելով այս գեղեցիկ ձեռնարկներու ծնունդին եւ կարեւորութեան մասին, կ'ըսէ.

«Տոհմիկ Օրերու շարքը, իր ազգային բնոյթով, հայապահպանման նպաստող նախաձեռնութիւն մըն է, որ անցեալէն

այսօր շատ սիրուեցաւ ու գնահատուեցաւ թորոնթոհայ գաղութին կողմէ: ՀՕՄԻ Թորոնթոյի «Ռուբինա» մասնաճիւղի եզակի նախաձեռնութիւններէն մէկը նկատուող եւ երեսուն տարիներէ ի վեր, տարեկան ձեռնարկ հանդիսացող «Տոհմիկ օր»-ը կը համարուի սոյն մասնաճիւղին յաջողագոյն ձեռնարկներէն մին, որուն ընդմէջէն, երկու օրերու տեւողութեամբ՝ խրախճանքի, գեղարուեստական յայտագիրի, գիրքի հրատարակութեան ու դասախօսութիւններու շնորհիւ, թորոնթոհայութիւնը կ'ըմբռնէ հայկական որոշ շրջանի մը կամ գաղութի մը իւրայատուկ դիմագիծը, հարուստ պատմականը, ազգային եւ մշակութային բազմերես ու լայնածաւալ հայակերտ ծալքերը»:

«Իր տեսակին մէջ իւրօրինակ այս ձեռնարկով, Հայ Օգնութեան Միութեան մեծ ընտանիքը ընդհանրապէս, եւ Թորոնթոյի ՀՕՄԻ «Ռուբինա» մասնաճիւղը յատկապէս, կը շարունակէ պաշտպանը հանդիսանալ հայ ժողովուրդի տոհմիկ ժառանգութիւններուն, առիթը կը ստեղծէ հայրենիքէն հեռու կայք հաստատած հայորդիներու հոգիներուն մէջ վառ պահելու մեր ազգային եւ մշակութային բարքերը, ինչպէս նաեւ՝ թորոնթոհայ համայնքի նորահաս սերունդին կը ծանօթացնէ հայկական ականդական բարքերը, սովորութիւնները եւ հայ գաղութներու պատմու-

թիւնը»:

«Տոհմիկ Օր»երը սկիզբէն նուիրուած են Արեւմտահայաստանի զանազան քաղաքներուն եւ գաւառներուն՝ Սեբաստիոյ, Կեսարիոյ, Ջէթունի, Քիլիսի, Պոլսոյ, Կիլիկիոյ տարբեր շրջաններուն, Երեւանին, հերոսամարտերու, Ցեղասպանութեան 100-ամեակին, Հայոց թագաւորութիւններուն ու տոհմերուն, Արցախի, Ջաւախքի եւ Նախիջեւանի, եւ հայկական գաղութներուն:

Նկատի առնելով այս ձեռնարկներուն պահանջած հսկայ աշխատանքը, մասնաճիւղը ընդհանրապէս կը յառաջացնէ հինգ ենթամասնախումբեր, նուիրուած գիրքի հրատարակութեան, գեղարուեստական յայտագրին, սրահի զարդարանքին եւ ցուցահանդէսին, ճաշի եւ վիճակահանութեան կազմակերպումին:

Տիկին Արշօ Զաքարեան, իր այցելութեան աւարտին, գրադարանիս նուիրեց Կեսարիոյ (2009), Էրեբունի-Երեւանի (2010), Արցախի (2011) եւ Իրաքի (2024) նուիրուած «Տոհմիկ Օր»երու հատորներէն մէկական օրինակ:

Տիկին Զաքարեան վերադարձաւ լծուելու Եգիպտոսի, Սուտանի եւ Եթովպիոյ նուիրուած յառաջիկայ տոհմիկ օրուան աշխատանքներուն, հարստացած իրեն նուիրուած «Արխիւ» մատենաշարի եւ այլ գիրքերով:





ՈՂՋԵՐԹ ԱՆՆԱ ԹՐԱՅԵԱՆ-ՏՈՒԱԴՃԵԱՆԻՆ

Փոքրիկ եւ մտերմիկ հիւրասիրութեան մը շուրջ, ՀԲԸՄԻութեան Գահիրէի Տեղական Մասնաճիւղը իր բարի երթի սրտաբուխ մաղթանքները փոխանցեց տիկին Աննա Տոլապճեան-Թրայեանին, որ վերջնականապէս կը մեկնի Գահիրէէն, հաստատուելու համար Տուպայ ապրող իր դստեր մօտ:

Տիկին Աննա Թրայեան 47 տարիներ առաջ, որպէս հարսը Գեղամ Թրայեանին (ողբացեալ) կը հաստատուէր Գահիրէ եւ կը դառնար եգիպտահայ համայնքին սիրուած, յարգուած եւ փնտռուած անդամներէն մէկը:

Տիկին Թրայեան իր անսակարկ նուիրումով ծառայած է գաղութիս, տարբեր ձեռնարկներու մէջ կարեւոր դեր խաղալով:

2013 թուականին հիմը դրեր է «Հայաստանցի հարսերու ԿՌՈՒՆԿ համախմբում»ին:

Շատեր օգտուած են Աննա Թրայեանի հմուտ եւ ճարտար խրատներէն եւ դասախօսութիւններէն, որպէս life coach, որ իր բարերար ազդեցութիւնը ձգած է ունկնդիրներուն, մանաւանդ այդ խրատներուն



կարիքը ունեցողներուն վրայ:

Սակայն իր ամենէն կարեւոր ներդրումը գաղութին այն է, որ ինք առաջարկած է գաղափարը ՀԲԸՄԻութեան հովանիին տակ գործող Հայկական Համացանցային Համալսարանի (AVC Armenian Virtual College) ճիւղ մը հաստատուելու նաեւ Գահիրէի մէջ, եւ դարձած էր անոր առաջին դեսպանն ու աւագ խորհրդատուն: Անոր իմաստուն առաջնորդութիւնն ու անխոնջ ջանքերը կարեւոր դեր խաղցած են AVC Egypt-ի յաջողութեան մէջ:

ՀԲԸՄԻութեան Գահիրէի Տեղական Մասնաճիւղի վարչութեան անդամներն ու բարեկամները իրենց սրտաբուխ մաղթանքները փոխանցեցին տիկին Թրայեանին եւ բաժնուեցան տխրութեամբ, սակայն վստահութեամբ, որ այս նոր հանգրուանին Աննա Թրայեան նոյնքան յաջողութիւններ պիտի ունենայ այլուր, որքան Գահիրէի մէջ:

Բարի եւ կանաչ ճանապարհ ու հեզասահ օրեր, սիրելի Աննա Տոլապճեան-Թրայեան:



Եգիպտոսի ՀԲԸՄիության ԵՐԻՏԱՍԱՐԴ ԱՐՀԵՍՏԱՎԱՐԺՆԵՐԸ՝ ՀԱՄԱՅՆՔՆԵՐՈՒ ՄԻՋԵՒ ԿԱՄՈՒՐՋ, ՍԵՐՈՒՆԴՆԵՐՈՒ ՀԶՕՐԱՑՈՒՄ

ՆԵՐԱԾՈՒԹԻՒՆ

ՀԲԸՄիության Երիտասարդ Արիեստավարժներու (ԵԱ) ցանցը 22-40 տարեկան հայերու համաշխարհային հաւաք է, որ միաւորուած է ընդհանուր տեսլականով՝ ապահովել բոլոր հայերուն եւ աշխարհի տարբեր վայրեր գտնուող հայկական համայնքներուն բարգաւաճումն ու բարեկեցութիւնը: Որպէս աշխարհի ամենամեծ, ոչ շահութաբեր հայկական կազմակերպութեան ՀԲԸՄի մաս, ԵԱ ցանցը կը հաւատայ համայնքին վերափոխող ուժին, առաջարկելով հարստացնող անձնական, մասնագիտական եւ ընկերային զարգացման առիթներ, ամբողջ աշխարհի իր 46 մասնաճիւղերուն մէջ:

2019-ի Մայիսին հիմնադրուելէն ի վեր, ՀԲԸՄի Եգիպտոսի ԵԱ կը մարմնաւորէ այս առաքելութիւնը՝ ՀԲԸՄ-ի չորս հիմնական սիւներուն՝ կրթութեան, մշակոյթի եւ ինքնութեան, մարդասիրական օգնութեան եւ ընկերային զարգացման վրայ հիմնուած ձեռնարկներու միջոցով: ԵԱ ցանցի հիմնական դերերէն մէկը մասնագիտական ցանցերու ստեղծումն ու կա-

պերու հաստատումն է, ինչպէս նաեւ տեղական եւ համաշխարհային հայկական համայնքներու միջեւ իմաստալից կապերու ստեղծումը:

Այսօր Եգիպտոսի ԵԱու խումբը կը գործէ 11 անդամներով՝ Ասփէ Ճիզմէճեան (նախագահ), Արմէն Ալեքսանեան (փոխնախագահ), Վարդան Թերզիպաշեան (գանձապահ), Թամար Սապրի (քարտուղար), Ալիսա Տէփոյեան (հաղորդակցութեան ղեկավար), Լորետանա Մկրտիչեան (էլեկտրոնային փոստ եւ հաղորդագրութիւններ), Ռուբէն Սաատ (ընկերային կապերու ռազմավարութիւն), Մանէ Ճիզմէճեան (հրապարակախօս) եւ 3 գլխաւոր գործադիր անդամներ՝ Ալիք Միքայէլեանը, Ճուլիա Աւանեանը եւ Արեգ Աբգարեան, որոնք կ'օգնեն ձեռնարկներու կազմակերպման: Աւելին, մեր վարչութիւնը բախտաւոր է ունենալու երեք անգնահատելի խորհրդատուական անդամներ (նախորդ՝ 2019-2025 վարչութենէն)՝ Արթո Պըրըքտանեան, Սարո Պըրըքտանեան եւ Մարինա Սիմոնեան, որոնք շարունակ կ'աջակցին ԵԱի աշխատանքներուն: Մի-





ասին, ընդհանուր առմամբ 14 անգամ, որոնք կը պաշտպանեն ՀԲԸՄ-ի համագործակցության, արհեստավարժության եւ ծառայության արժեքները, ապահովելով Եգիպտոսի գործոն մասնակցութիւնը ԵԱ համաշխարհային ցանցին մէջ:

ՄԱՐԴԱՍԻՐԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Եգիպտոսի ՀԲԸՄիութեան ԵԱ նուիրուած է մարդասիրական գործերու, մասնաւորապէս՝ ազգային հրատապ պահերուն: 2020 թուականի Արցախեան պատերազմի ժամանակ խումբը հարցերը ծանօթացնելու ձեռնարկ մը եւ դրամահաւաք կազմակերպեց, հաւաքելով 40,000 եգիպտական ոսկի եւ 1,250 ամերիկեան տոլար, աջակցելու համար պատերազմէն տուժածներուն: Երբ ճգնաժամը վերսկսաւ 2023 թուականին, Եգիպտոսի ԵԱ կրկին կազմակերպեց երկրորդ դրամահաւաք մը, որուն հասոյթը Եգիպտոսի ՀԲԸՄը կրկնապատկեց: Այս նախաձեռնութիւնները ոչ միայն անհրաժեշտ օգնութիւն հայթայթեցին արցախահայութեան, այլեւ ամրապնդեցին միասնութեան եւ կարեկցանքի ոգին եգիպտահայերուն մէջ:

ԿՐԹԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Կրթութիւնը կը մնայ Եգիպտոսի ԵԱ գործունէութեան անկիւնաքարը: 2023 թուականին ԵԱի վարչութիւնը կազմակերպեց ABAKA-ն՝ պատանիներուն ուղղուած դասընթացքներու շարք մը, որ նախատեսուած է քաջալերելու ստեղծագործական եւ քննադատական հմտութիւնները եւ ապագայի մասնագիտութիւններուն նախապատրաստելու համար զիրենք:

Մարինա Սիմոնեանի եւ Գեղամ Կարսեանի ղեկավարութեամբ «Tech Wizards»ը մասնակիցներուն ծանօթացուց արհեստական բանականութեան զարգացող թեքնիքներուն եւ նորարարութիւններուն, իսկ Ասփէ Ճիզմէճեանի ղեկավարութեամբ «Photoshop and photo-manipulation»



2024-ի դասընթացքը խրախուսեց գեղարուեստական թուային ձեւաւորումը (design), տեսողական պատմութիւններու միջոցով: 2025 թուականի երրորդ ձեռնարկը կը ղեկավարէ դոկտ. Արթո Պըլըքտանեան, կեդրոնանալով քննադատական մտածողութեան ուսուցման վրայ:

Աւելին, COVID-19 համավարակի ժամանակ, Եգիպտոսի ԵԱ-ը ընդլայնեց իր կրթական հասանելիութիւնը համաշխարհային մակարդակով՝ YP Global Live Series-ի միջոցով, որուն հիւրն էր «Ծանօթացէ՛ք Եգիպտոսի գաղտնիքներուն. Եգիպտական հիրոկլիֆ գիրերը» խորագրով ծրագիրը: Համացանցային այս ծրագիրը առիթ տուաւ աշխարհասփիւռ հայերէն անոնց, որոնք հետաքրքրուած են, ծանօթանալու Եգիպտոսի մշակոյթին եւ պատմութեան եւ ինքնութեան հետ անոր ունեցած կապին, խթանելով մշակութային փոխանակումը համաճարակին պարտադրած մեկուսացման օրերուն:

ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Մշակոյթի պահպանումը Եգիպտոսի ԵԱի առաքելութեան հիմքն է:

Սաթենիկ Չագըր սրահէն ներս տեղի ունեցած շնորհանդէսին, նուիրուած դոկտ. Մարուշ Երամեանի աշխատասիրած «Աշխարհ մը Նամակներու մէջ» անգլերէն գիրքին, ԵԱի անդամները մասնակցեցան բացման խօսքով, ներկայացնելով գիրքին նամակներուն հեղինակ Ճանիկ Չագըրի կենսագրութիւնը:



Եգիպտոսի ԵԱՆ աջակցել է երիտասարդ կինո-բեմադրիչ Տեսիլ Մխտիկեանին, կազմակերպելով անոր «Սատանային Գործը» ֆիլմին ցուցադրությունը:

Կազմակերպել է նաև Քրիստինա Պողոսեանի 2023-ի շնորհանդեսը, ուր ճանապարհորդուհին ներկայացուցել էր իր հայկական արձանները գտնելու ողիսականը, հեծանիսով ճամբորդություններուն ընթացքին:

Այս ծրագրերը, ինչպես նաև այն, որ Եգիպտոսի ԵԱ հիմնական կազմակերպությունն է, որուն կը դիմեն դուրսէն ժամանած երիտասարդ հայերը, կ'արտացոլէ Եգիպտոսի շարունակական նուիրումը՝ հայ ծայնները բարձրացնելու եւ մշակոյթը համայնքին հետ կապելուն:

ԸՆԿԵՐԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ԵԱու ամենէն կարեւոր ներդրումը հաղորդակցութիւնն է, տարբեր երկիր/քաղաքներու խումբերուն հետ: Տեղական մակարդակով յանձնախումբը կազմակերպել է հաւաքոյթներ, որոնք կը միացնեն ուսուցումն ու զուարճանքը, ինչպէս «գինի եւ պանիր» երեկոն եւ **վիկտորիան**ներու երեկոն, որ կը նշէ հայոց պատմութիւնը **ինդըրաքթի** խաղերու միջոցով:

Համաշխարհային մակարդակով, ԵԱ

Եգիպտոսը կը շարունակէ ամրապնդել իր ներկայութիւնը: 2025 թուականի Մարտին յանձնախումբը մասնակցեցաւ ՀԲԸՄ ԵԱ Մերձաւոր Արեւելքի շրջանի գործադիր ժողովին, Տուպայի մէջ, որուն ընթացքին Յորդանանի, Կիպրոսի, ԱՄԷ-ու, Իրանի, Սուրիոյ, Լիբանանի եւ Իրաքի մասնաճիւղերը հանդիպեցան: Եռօրեայ հանդիպման ընթացքին մասնակիցները բազմաթիւ ձեռնարկներ եւ հանդիպումներ ունեցան, ինչպէս սեմինարներ եւ հանդիպում ու զրոյց ՀԲԸՄի պատուոյ նախագահ Պերճ Սեդրակեանի հետ: Շաբաթավերջը աւարտեցաւ Ապագայի թանգարան մշակութային այցելութեամբ եւ Շարժայի Սուրբ Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցւոյ կիրակնօրեայ պատարագին մասնակցութեամբ, որմէ ետք Արք. Մեսրոպ Սրբ. Սարգսեանը ողջունեց մասնակիցները:

ԵԱ Եգիպտոսի համար այս հաւաքը առիթ էր գաղափարներու փոխանակումի, ամրապնդելու տարածաշրջանային գործընկերութիւնները եւ խորացնելու իր դերը ապագայ համագործակցութիւններու ձեւաւորման մէջ:

2025 թուականի Յուլիսին ԵԱ Եգիպտոսը կը մասնակցի նաև FOCUS 2025-ին՝ ՀԲԸՄ ԵԱ-ի երկամեայ համաշխարհային հանդիպման, որ կազմակերպուել էր ԵԱ Հայաստանի մասնաճիւղին կողմէ, Երեւանի մէջ: ԵԱ Եգիպտոսը միացել է 28



երկիրներէ ժամանած աւելի քան 600 երիտասարդ արհեստավարժներու՝ նշելու ԵԱ-ի 30-ամեակը եւ աշխարհասփիւռ հայերը հզօրացնելու համատեղ առաքելութիւնը՝ ցանցային աշխատանքի, **մենթորութեան**, մշակութային ծրագրերու եւ կամաւորական աշխատանքի կենսունակ շաբթուան մը ընթացքին: ԵԱ յանձնախումբի անդամներու գործադիր նիստին յաջորդեր է զրոյցը Ամենայն Հայոց Կաթողիկոս Գարեգին Բ.ի հետ:

200 մասնակիցներ լսեցին հայկական ինքնութեան բարդութիւններուն եւ զարգացման վերաբերեալ, որ կը վարէր հաղորդակցութեան փորձագէտ Ալեքսանդր Պլատոն Հակոբեան (Երեւան, Հայաստան): Մեր ԵԱ Եգիպտոսի մասնակիցներէն մէկը՝ Եգիպտոսի դոկտոր Արթուր Պըլըքտանեան, հրաւիրուեցաւ որպէս խօսնակ:

Միջոցառումներէն մէկը ծառատնկումն էր՝ աւելի քան 700 ծառ տնկուեցաւ եւ 500 դպրոցական պայուսակ լեցուեցաւ դպրոցական պիտոյքներով, իսկ արուեստի նուիրուած միջոցառման ընթացքին, մասնակիցներուն ներկայացուեցան տարբեր մշակութային տարբեր ելոյթներ, ինչպէս պարային ներկայացում:

Ելոյթը փակուեցաւ Դուին երաժշտական սրահէն ներս կայացած շլացուցիչ կալա երեկոյով, որուն մասնակցեցան 525 հիւրեր, իսկ սկիզբը ՀԲԸՄի նախագահ Սէմ Սիմոնեանը ելոյթ ունեցաւ ոգեշնչող խօսքով:

ԵԶՐԱԿԱՅՈՒԹԻՒՆ

Արագ փոխուող այս տարածաշրջանին մէջ ՀԲԸՄի Երիտասարդ Արհեստավարժներու Եգիպտոսի կազմակերպութիւնը կը շարունակէ զարգանալ, կապ հաստատել եւ նպաստել ամենուրեք գտնուող հայերու բարգաւաճման: ՀԲԸՄի չորս հիմնասիւններով՝ մարդասիրական, կրթական, մշակութային եւ ընկերային զարգացումով առաջնորդուելով՝ յանձնախումբը կը շարունակէ նուիրուած մնալ համայնքին ամրապնդման, միաժամանակ ընդլայնելով իր կապերը սահմաններէն դուրս: ԵԱ Եգիպտոսը կ'ողջունէ համագործակցութիւնը եւ նոր գաղափարները բոլոր անոնց, որոնք կը կիսեն իր տեսլականը:



ԶՈՅԳ ԱՄԵԱԿՆԵՐ

Եգիպտոսի Հայ Կարիքի Խաչը գեղեցիկ երեկոյթով մը տօնախմբեց Հայ Օգնութեան Միութեան 115 եւ Հայ Կարիքի Խաչի 95 ամեակները, որոնց համար ԱՄՆէն հրաւիրուած էր դոկտ. Նայիրի Տէրտէրեան:

Հանդիսութիւնը տեղի ունեցաւ Հինգշաբթի, 25 Սեպտեմբեր 2025-ի երեկոյան, Յուսաբեր Ակումբի Գարագաշեան սրահէն ներս: Հանդիսութեան կը հովանաւորէր Թեմիս Բարեջան Առաջնորդ Տէր Աշոտ Եպս. Մնացականեան, իսկ նախագահուիին էր տիկ. Սոնիա Տատուրեան: Ներկայ էին ՀՀ հիւպատոսը, հոգեւոր հայրեր, միութենական ներկայացուցիչներ, ՀՕՄուիներ եւ համակիրներ:

Օրուան հանդիսավարն էր տիկ. Թամար Քէօհնէլեան:

Եգիպտոսի, Հայաստանի, Արցախի եւ ՀՕՄի քայլերգներէն ետք բացման խօսքով հանդէս եկաւ տիկ. Թամար Քէօհնէլեան, որ հրաւիրեց ՀԿԽի երկարամեայ անդամուհի եւ ատենապետուհի տիկ. Սոնիա Պայրամեանը, որ իր կուռ խօսքով ներկայացուց Եգիպտոսի Հայ Կարիքի Խաչին պատմականը, ծնունդէն մինչեւ մեր օրերը, եւ 95 տարիներու ընթացքին կատարուած աշխատանքներն ու ծրագիրները:

Օրուան հանդիսավարը, ներկայացնելէ ետք դոկտ. Նայիրի Տէրտէրեանի հակիրճ կենսագրականը, հրաւիրեց զինք ըսելու իր խօսքը:

Դոկտ. Նայիրի Տէրտէրեան ծնած է Փասատինա (ԱՄՆ), աւարտեր է Washington State University-ն, ապա California Stanford համալսարանէն ստացեր է մագիստրոսական եւ վարդապետական աստիճանները (MA եւ PhD), սահմանադրական իրաւունքներու ճիւղին մէջ:

Եղած է ՀՕՄի Կեդրոնական Վարչութեան երկարամեայ անդամ եւ ատենապետուհի (նախկին):

Դոկտ. Տէրտէրեան իր խօսքը երկու



բաժիններով ներկայացուց՝ Ա. ՀՕՄի հիմնադրութեան պատմականը, Բ. Իրագործած ծրագիրներն ու աշխատանքը (տեսերիզով):

«Մեր տեսլականը կը գերազանցէ ազգութիւնը» ըսաւ դոկտ. Տէրտէրեան իր խօսքին մէջ, եւ տասնամեակներու ընդմէջէն ներկայացուց ՀՕՄի աշխատանքները, որոնց դափնեպսակը եղեր է 1998 թուականին ՄԱԿի (Միացեալ Ազգերու Կազմակերպութիւն) անդամակցութիւնը, որպէս ոչ շահութաբեր եւ մարդասիրական կազմակերպութիւն, եւ անոր 19 տարբեր մասնաճիւղերուն մէջ ՀՕՄի ներգրաւումը:

Այսօր ՀՕՄը 26 երկիրներու մէջ ունի 211 մասնաճիւղեր, 15 հազար անդամներով, որոնք ոգի ի բռին աշխատած են եւ կը շարունակեն աշխատիլ Արցախի, Զաւախքի, Հայաստանի եւ աշխարհասփիւռ հայ գաղութներուն մէջ, հայ կարիքաւոր ընտանիքներու եւ անհատներու բարօրութեան համար:

Հետաքրքրական է եւ քիչ մըն ալ առեղծուածային, թէ ինչո՞ւ այս կազմակերպութիւնը, որ սկսեր է որպէս Հայ Կարմիր Խաչ (որպէս հայկական բաժինը համաշխարհային Կարմիր Խաչին), տարբեր գաղութներու մէջ տարբեր անուններ կը կրէ՝ Եգիպտոսի համար անիկա Հայ Կարիքի Խաչ է, Ֆրանսայի մէջ՝ Կապոյտ Խաչ, ԱՄՆի մէջ Հայ Օգնութեան Միութիւն (ՀՕՄ), Սուրիոյ մէջ՝ Սուրիահայ Օգնութեան Միութիւն (ՍՕԽ), Լիբանանի



մէջ՝ Լիբանանահայ Օգնութեան Միութիւն (ԼՕԽ)...

Խօսելով Ամերիկայի մէջ միութեան անուանափոխութեան մասին, դոկտ. Տէրտէրեան պատմեց, թէ երբ Ամերիկայի պետութիւնը կ'որոշէ մեծ գումար մը նուիրել Կարմիր Խաչին, սխալմամբ գումարը կը հասնի Հայ Կարմիր Խաչին: Քանի մը շաբաթ ետք, երբ յստակ կը դառնայ թէ «սխալ» տեղ ղրկուել է գումարը, խաչուհիները բացատրութիւն տալու համար Ուաշինկթըն կը կանչուին, եւ իրենցմէ կը պահանջուի գումարը վերադարձնել:

–Բայց այդ գումարը արդէն օգտագործեցինք,– կը պատասխանեն խաչուհիները:

–Այսքան արա՞գ:

–Կարիքը չի սպասեր,– կը պատասխանեն խաչուհիները,– երբ միջոցը ունինք, անմիջապէս օգնութիւնը կը կազմակերպենք:

Պետութիւնը կը համաձայնի գումարը ետ չվերցնել, այն միակ պայմանով, որ միութեան անունը փոխուի, յառաջիկային նման շփոթներ չստեղծելու համար:

Դոկտ. Նայիրի իր խօսքը վերջացուց պաստառին վրայ ցուցադրելով Արցախէն տեղահանուած մանուկներու խմբանկար մը, եւ ըսաւ.

«Երբ այս մանուկները կը հաւատան, որ օր մը կրկին պիտի վերադառնան իրենց հողին, մենք իրաւունք չունինք այդ յոյսը չփայփայելու, անոր համար աշխատանք չտանելու»:

Բանախօսութենէն ետք գեղարուես-

տական փոքր յայտագիր մը ներկայացուեցաւ: Կրէթա Էսմէրեան երգեց Մշօ Աղջիկ երգը, դաշնակի ընկերակցութեամբ Արուս Յարութիւնեանի:

Փոքրերու խումբ մը երգ ու պարով ելոյթ ունեցաւ, որմէ ետք տիկ. Նորա Քէօհնէլեան ասմունքեց Գէորգ Էմինի «Սասունցիներու Պարը» երկարաշունչ քերթուածը, մեծապէս խանդավառելով ներկաները իր զգայացունց ասմունքով: Անմիջապէս ետք Սարգարապատ պարախումբը խանդավառեց ներկաները իր պարով:

Եգիպտոսի Հայ Կարիքի Խաչի վարչութիւնը յուշանուէրով մը պատուեց դոկտ. Նայիրի Տէրտէրեանը, ինչպէս նաեւ փոքր յուշանուէրներով գնահատեց գեղարուեստական յայտագրին մասնակիցները:

Երեկոն փակուեցաւ Առաջնորդ Սրբազան հօր սրտի խօսքով.

«Նման ամեակներ իրենց մէջ կը պահեն անցած տարիներու աշխատանքէն եւ բոլոր նուիրեալներուն եռանդէն հունտեր, որոնք կը ծաղկին այսօր»:

Յայտագրին ամբողջացումէն ետք ներկաները վայելեցին գինին, ակումբին խոհանոցներուն մէջ պատրաստուած մատնուտեստի բաց սեղանը եւ երկար ժամանակ հաճոյքով եւ ուրախութեամբ զրուցեցին յարգելի դասախօսուհիին եւ խաչուհիներուն հետ:

Բարի երթ Սփիւռքի մեծագոյն միութիւններէն մէկուն, իր ազգանուէր աշխատանքին փայլուն շարունակութեան համար:





«ՋԱՀԱԿԻՐ»Ը ՆՈՐ ՁԵՒԱԶԱՓՈՎ

24 Յուլիս 2025 թուականով Գահիրէի (Եգիպտոս) «Ջահակիր» երկշաբաթաթերթը նոր ձեւաւորումով կը ներկայանայ ընթերցասէր հասարակութեան՝ ոչ թերթի, այլ ամսագրի ձեւաւորումով:


Այս առաջին թիւին մէջ «Ուշադրութիւն»ը կը գրաւէ մեր ուշադրութիւնը. Այնտեղ կ'ըսուի.

«Այս թիւէն սկսեալ Ջահակիր լոյս կը տեսնէ նոր ձեւաչափով:

Բովանդակութիւնը, ուղղութիւնը եւ խմբագրական կազմը կը մնան նոյնը: Միակ տարբերութիւնը կարճ լուրերու ջնջումն է, այն համոզումով, որ երկշաբաթաթերթի մը կարողութիւններէն անդին է թարմ լուրի փոխանցումը, երբ այսօրուան թեքնոլոգիք յառաջացումներուն շնորհիւ լուրը կը տարածուի կայծակի արագութեամբ եւ վայրկենապէս կը հասնի ամէնուր:

Ջահակիր կը շարունակէ մնալ Գահիրէի Հայկական Ընթերցասրահի պատասխանատուութեան տակ:

Այս թիւէն սկսեալ նաեւ կ'անցնինք թուային տպագրութեան, ի տարբերութիւն նախապէս օգտագործուող օֆսէթին: Տպագիր օրինակները պիտի սահմանափակուին գրադարաններու համար, իսկ տարածումը պիտի ըլլայ հիմնականապէս առցանց: Այս պատճառով, բոլոր անոնք որոնք կը փափաքին կարդալ Ջա-



հակիրը, հաճին իրենց ել-հասցէն (e-mail) փոխանցել կողքի էջին վերջին էջին վրայ յիշատակուած հասցէին (haigavakian@yahoo.com) կամ հեռաձայնի թիւին, եւ մենք կը խոստանանք կանոնաւորապէս առաքել թուային տարբերակը»:

ՊԱՇՏՕՆԱԿԱՆ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹԻՒՆ ՍԱԹԵՆՆԻԿ ՉԱԳԸՐԻ ՄԵՆԱՏԱՆ ՄԷՋ.

*մէջփեղը Երջ. Մամբրէ Սրբ.
Սիրունեան, կողքին՝ Վահան
Թէքէեան, աջին՝ Սաթենիկ Չազըր.*





ԵԳԻՊՏԱՀԱՅ ՆԿԱՐԻՉՆԵՐ Ի ՊԱՏՈՒԻ

ՀԲԸՄիութեան Փասատինա-Կլենտելի (ԱՄՆ, ԼԱ) մասնաճիւղը 24 Հոկտեմբեր 2025-ին կազմակերպած է ցուցահաղորդութիւն-վաճառք մը Ենովք Պալիկեանի անհատական հաւաքածոյին:

Ցուցահանդէսին բացումը՝ 24 Հոկտեմբեր 2025-ին տեղի պիտի ունենայ, իսկ վաճառքէն գոյացած գումարը պիտի տրամադրուի ՀԲԸՄիութեան երիտասարդական, մարզական եւ սկաուտական ծրագիրներուն:

Այս հաւաքածոյին մաս կը կազմեն եւ կը ցուցադրուին եգիպտահայ նկարիչներու կարեւոր գործեր, Բիւզանդ Կոճամանեանի († 2 նկար), Յակոբ Յակոբեանի (նախկին եգիպտահայ †), Եասմինի (Պալարեան, 1 նկար) եւ Վահէ Վարժապետեանի (2 նկար) գործերը:

Այս ուրոյն հաւաքածոն գնահատուած է մասնագէտ գնահատող Թամար Սինանեան-Նա'ամանի կողմէ եւ կը պարփակէ գործեր հետեւեալ նկարիչներէն.

Արտաշէս Աբրահամեան, Արկիրով, Հ. Ասատուրեան, Աւագ, Տոթունկ Պէօյտ, Պուքարաս, Է. Տիլանեան, Վ. Կարապետեան, Է. Կարսեան, Բիւզանդ Կոճամանեան, Եղուարդ Կուրայեան, Փոլ Կիրակոսեան, Յակոբ Յակոբեան, Սարգիս Համալպաշեան, Համագ, Հոմորա, Ժանսեմ, Քարուկեան, Էմիլ Քազա, Գրիգոր Զօհրապ Քէշիշեան, Բ. Գոլոզեան, Համբարձում Քիւփէլեան, Քիւպոքով, Մինասեան, Սինար, Աշոտ Միրզոյեան, Զօհրապ Միրզոյեան, Անահիտ Նասիպեան, Ութի Նտուէզէ, Գրիգոր Նորիկեան, Պրուս Օնօպրաքալեյա, Դաւիթ Բարսեղեան, ԺողէՖ Սարգիսեան, Սամուէլ Սեւադա, Դալալեան, Սարօ Դանիէլեան, Գալուստ Դարբինեան, Վարդան Թաշճեան, Հ. Թոքմաճեան, Ա. Ծովեան, Ուտունիծեպ, Վահէ Վարժապետեան, Եասմին, Ա. Զօհրապ, Զոմեան եւ ուրիշներ:

Ցուցահանդէսը բաց պիտի մնայ երեք օրեր, Հոկտեմբերի վերջին շաբաթավերջին՝ 24-26, ՀԲԸՄի Վաչէ եւ Թամար Մանուկեան Մշակութային Կեդրոնէն ներս:

Ծրագրին գրքոյկին վրայ ՀԲԸՄիութիւնը պաշտօնապէս շնորհակալութիւն կը յայտնէ Պալիկեան եւ Պոյաճեան ընտանիքներուն, իրենց շարունակական քաջալերանքին եւ Միութեան ծրագիրներուն միշտ նեցուկ կանգնելու համար:



Puzant Godjamenian
Mother With Baby
Oil on Canvas
33 x 21 inches framed
\$2500

3



Puzant Godjamenian
Innocent Ladies to Genocide, 1971
Charcoal and watercolor on paper.
33 x 27 inches framed
\$2500

4




Vahe Varjabedian
Roosters Fighting, 1971
Oil on Canvas
26 x 34 inches framed
\$1250

7



Vahe Varjabedian
Lady in Flowers, 1971
Watercolor on paper
21 ½ x 16 ½ inches
\$1000

8



Yasmin
The Rose
Watercolor on Paper
22 x 15 inches framed
\$750

9



ՆՈՒՊԱՐ 200

ՄԱՏԵՆԱԳԻՏԱԿԱՆ ՑԱՆԿ

Նուպար Փաշա Նուպարեանի մասին գրուած գիրքերու

- *Յիշատակարան Նուպար Բաշայի Արձանին Բացման Առթիւ*, տպագրութիւն Արշալոյս լրագրի, 1904, 39 էջ պատկերազարդ.
- *Նուպար Փաշա, 1825-1899*, Էմիլ Պէրդրան, թարգմանեց Մեսրոպ Նուպարեան, հրատարակութիւն Պ. Պալենց գրատան, Կ. Պոլիս, 1910, 86 էջ.
- *Պօղոս Փաշա Նուպարեան*, Երուանդ Օտեան, հրտ. Եփրատ գործակալութեան (Ա. Յ.), Կ. Պոլիս, 1913, 100 էջ, էջ 4-8 Նուպար Փաշայի ծագումն ու հակիրճ կենսագրութիւնը.
- *Զերտաշտ Նուպար Փաշա Իշխան Նուպարեան*, ծագումն եւ կենսագրութիւն (չորս պատկերօք), հաւաքեց եւ հրատարակեց Գ. Զէրչեան, 1920, 35 էջ.
- *Նուբար Փաշա Նուբարեան (1825-1899)*, Յ. Թովուզեան, ՀՍՀ, Ե, 1982, հատոր 8, էջ 400-401.
- *Nubar Pacha Un Grand Serviteur de l'Egypte*, Victoria Archarounui, prix Wacif Pacha Boutros Ghali, 1950, 238 pages.
- *Nubar Pacha devant l'histoire*, Holinski B., Paris, 1886.

- **نوبار في مصر**, نبيل زكى, كتاب اليوم, يصدر عن مؤسسة اخبار اليوم, ١٩٩١, ٢٣٨ صفحة

- **مذكرات نوبار باشا**, ترجمة من الفرنسية جaro روبير طبقيان, دار الشروق, القاهرة, ٢٠٠٩, ٢٠١٥, ٧٢٤ صفحة.

نوبار باشا خادم مصر الكبير, تأليف السيدة فيكتوريا أرشاروني, ترجمة جaro طبقيان, صندوق ز. اكر, القاهرة, ٢٠٢٤, - صفحة ٢٦٩



ՀԱՅՐԱ... Գրեց՝ ԱՐԻ ՀԱՏՏԷՃԵԱՆ «Նոր Մարմարա»

Սփիւռքի ամենէն երկարակեաց թերթին նոյնքան երկարակեաց խմբագիր Ռոպէր Հապտէճեանի շիջումը Պոլսոյ մէջ, հակառակ յառաջացած տարիքին, մեծ սուգ պատճառեց սփիւռքահայ գրական շրջանակներուն:

Հապտէճեան իր խմբագրապետի տաղանդին կողքին, նաեւ տաղանդաւոր արձակագիր էր, որուն անունին կը պատկանին բազմաթիւ հատորներ:

Գիտեմ որ շատ բան գրուեցաւ, կը գրուի եւ դեռ պիտի գրուի, եւ անշուշտ պէտք է որ գրուի, եւ հորս՝ Ռ. Հատտէճեանի մասին (1926-2025): Որքա՛ն որ ալ խօսուի կամ գրուի իր լրագրութեան, խմբագրութեան, հայ լեզուի ու մշակոյթի հանդէպ իր անսասան սիրոյ ու ծառայութեան, բազմաճառար ընթերցողներու եւ իր միջեւ ստեղծած այդ ամենօրեայ միասնութեան, 57 տարուան իր մրցանշային խմբագրապետութեան, ութսունի մօտ իր գիրքերու հրատարակութեան, Հայաստանի, Մայր Աթոռի ու Պոլսոյ Պատրիարքութեան բարձրագոյն մետալներն ալ ներառեալ իր ստացած անհամար շքանշաններուն ու մրցանակներուն համար՝ ան միշտ արժանի պիտի ըլլայ աւելիին:

Իմ խօսքը ասոնց մասին պիտի չըլլայ: Ես պիտի ըսեմ այն ինչ որ ինձմէ կամ եղբորս՝ Այգէն զատ ոչ մէկը կրնայ ըսել:

Իմ հայրն էր ան: Ան մինչեւ իմ այս 70 անց տարիները, ինծի, իրեն նման մարդու մը զաւակը ըլլալու հպարտութիւնը ու հաճոյքը ապրեցուց: Մանկութեանս այն տարիներէն սկսեալ զորս կրնամ յիշել, մինչեւ 6 Սեպտեմբեր 2025 առաւօտ ժամը 8.30, չէ պատահած որ ձայնը բարձրացնէ, զիս յանդիմանէ, սիրտս կոտրէ: Իր այդ անոյշ ու մեղմ ձայնով, փիլիսոփայական ու խելացի իր ցուցմունք ու խրատներով միշտ մեր կողքին եղաւ:

Շատ սիրեց մեզ, վստահաբար մեր արժանացածէն շատ աւելին տուաւ մեզի թէ՛ բարոյապէս եւ թէ՛ նիւթապէս: Ամբողջ կեանք մը, որուն ընթացքին եղաւ կատա-



րեալ ու օրինակելի հայր մը:

Ինծի համար վերջացաւ որդի ըլլալու հանգրուանը, այլեւս միայն հայր եւ մեծ հայր եմ:

Միակ փափաք մը ունիմ՝ կարենալ իմ հոր նման հայր մը ըլլալ զաւակներուս:

«Ա՛հ պէ հայրիկ...»

Դուն իմ սիրտը առաջին եւ վերջին անգամ կոտրեցիր, երբ այդ անիծեալ պահը հասաւ եւ դուն քու այդ պաշտելի ձեռքդ իմ ձեռքին մէջ փչեցիր քու վերջին շունչը: Երանի՛ քիչ մը խիստ ըլլայիր, յանդիմանէիր, հալածէիր զիս, ինքզինքդ այդքան չսիրցնէիր... Թերեւս այսքան չէի արտասուեր քու ետեւէն:

Ռ. ՀԱՏՏԷՃԵԱՆ՝ ՅԱԻԵՐԺԻ ԾԱՄ-ԲՈՐԴ

«Մարմարա»ի խմբագրակազմին եւ պոլսահայութեան մեծ կորուստը

Մեծ սուգ է ՄԱՐՄԱՐԱ-ի ընտանիքի համար:



Մեր երկարամեայ խմբագրապետը՝ Ռ. ՀԱՏՏԷՃԵԱՆ կեանքի դարադարձը նշել է երեք ամիս առաջ, այս առտու, պատկառելի տարիքին մէջ աւարտեց իր երկրային ուղին ու բռնեց յաւերժութեան ճամբան:

Սուգ է համայնքի ու բոլոր անոնց համար, որոնք ԶԻՆՔը ճանչցան ո՛չ միայն որպէս անփոխարինելի խմբագիր, այլ որպէս ՄԱՐԴ՝ մեծատառով:

Անսակարկելի ճշմարտութիւն է որ ՄԱՐՄԱՐԱ-ն իր ոսկեդարը ապրեցաւ Ռ. ՀԱՏՏԷՃԵԱՆի շնորհիւ: 1967 թուականէն սկսեալ՝ իր խմբագրապետութեան ներքեւ, մեր թերթը միայն չիրատարակուեցաւ, այլ շնչեց, սիրեց, կերտեց, ապրեցաւ, պայքարեցաւ:

Լեզուի պահապան էր Ռ. ՀԱՏՏԷՃԵԱՆ, նաեւ հոգիի ջահակիր՝ անոնց համար, որոնց սրտին մէջ կենդանի է հայ ոգին եւ որոնց համար մայրենին արժէք մը չէ միայն, այլ կեանքի բաբախուն մասնիկ:

Տիպար լրագրողի մարմնացում էր Ռ. ՀԱՏՏԷՃԵԱՆ: Ո՛չ մէկը վիրաւորեց, անտարբեր չգտնուեցաւ դիմացինի արժանապատուութեան նկատմամբ, իր քննադատութիւններուն մէջ մնաց զուսպ ու հաւասարակշռուած. սիրեց, յարգեց, սորվեցուց:

Պոլսահայութեան վերջին 60ամեակի հզօր պատմիչներէն մէկն էր Ռ. ՀԱՏՏԷՃԵԱՆ, անփոխարինելի վկայագիրը այն տարիներու, երբ մեր հասարակութիւնը դեռ հայախօս էր, երբ հայ մամուլը հպարտութեամբ կը կարդացուէր տուններէն ներս:

ՄԱՐՄԱՐԱ-ն ունեցաւ բազմահազար ընթերցողներ, որոնց համար թերթը մասունք էր, իսկ Ռ. ՀԱՏՏԷՃԵԱՆի յօդուածները՝ բարոյական սուրբ նշխար:

Յարգանքի ու սիրոյ արժանի մարդ էր Ռ. ՀԱՏՏԷՃԵԱՆ: Ապրեցաւ ստեղծագործական կեանքի գագաթային պահերը, մեծարուելով Սփիւռքի գաղթօճախներու ու Հայաստանի պետական ու հասարակական շրջանակներէն ներս:

Բախտաւոր ծնող էր Ռ. ՀԱՏՏԷՃԵԱՆ: Միշտ մնաց ընտանիքի հոգածութեան կիզակետին վրայ: Զոյգ որդիները մինչեւ վերջին վայրկեանները «պահակ» մնացին իր սնարին քով: Այս առտու ժամը 8:30ի շուրջ, արժանապատիւ հեռացաւ սիրով

շրջապատուած ու խաղաղ սիրտով: Հոգին աւանդեց իր որդիներուն ձեռքերուն մէջ ու անցաւ յաւերժութեան անդորրը՝ անջնջելի հետք թողելով մեր բոլորի յիշողութեան մէջ:

Այսօր որբացաւ ՄԱՐՄԱՐԱ-ի ընտանիքը: Որբացան նաեւ անոնք, որոնք սիրեցին հայ մամուլը, վայելեցին Ռ. ՀԱՏՏԷՃԵԱՆի բեղուն գրիչէն յամեցող գրական շունչը, ոգեշնչուեցան ՀԱՏՏԷՃԵԱՆԱԿԱՆ գաղափարներով:

Մեր խոնարհումը ձեզի՝ սիրելի ԽՄԲԱԳՐԱՊԵՏ:

Մեր երախտագիտութիւնը ձեր ապրած կեանքին:

Մեր խոստումը՝ անսասան հաւատքով փարած մնալու ձեր դաւանած արժէքներուն:

Թող լոյսերով ողողուի ձեր երկնային ճամբան:

ՄԱՐՄԱՐԱ-Ի ԽՄԲԱԳՐԱԿԱԶՄ ԿԵՆՍԱԳՐՈՒԹԻՒՆ ԵՒ ՄԱՏԵՆԱ- ԳԻՏՈՒԹԻՒՆ

Պատրաստեց՝ ԿԱՐՕ ԱԲՐԱՀԱՄԵԱՆ

Խմբագիր, վաստակաւոր լրագրող, հրապարակագիր, թատերագիր, յուշագիր, թարգմանիչ:

Ծնած է Պոլիս: Փոքր տարիքէն յաճախած է Վիեննական Մխիթարեան վարժարանը, զոր աւարտելէ ետք անցած է Պոլսոյ համալսարանի գրականութեան բաժանմունքէն եւ վկայուած՝ փիլիսոփայութեան եւ հոգեբանութեան ճիւղերէն:

Առաջին հրատարակուած գործը «Բառասխալ» խորագրեալ պատմուածք մըն է, լոյս տեսած՝ Խաչիկ Ամիրեանի թարգմանութեամբ, «Անիւ» պարբերաթերթին մէջ: 1955-էն սկսեալ մաս կազմած է «Մարմարա»ի «Գրական էջեր»ու խմբագրական կազմին: Աշխատակցած է «Ճառագայթ», «Անիւ» ու «Սան» պարբերաթերթերուն եւ «Երջանիկին Տարեգիրքը»ին:

1967-ին ստանձնած է «Մարմարա» օրաթերթի խմբագրապետութիւնը, զոր մեծ հեղինակութեամբ վարած է շատ երկար տարիներ: 1981-էն ի վեր «Մարմարա»-ի մէջ սկսած է հրատարակել «Յուշատետր» խորագիրին տակ հրապարակագրական հետաքրքրական յօդուածներ,



որոնք 1982-էն սկսեալ պարբերաբար հրատարակուած են. անոնցմէ ցարդ լոյս ընծայուած են 63 հատորներ, իսկ 32 հատորներ ալ պատրաստ են հրատարակութեան: Ըստ հեղինակին, այս շարքը պիտի հասնի աւելի քան 100 հատորի: Հատտէճեան ունի նաեւ թարգմանչական հսկայ վաստակ մը: Ընդհանրապէս «Մարմարա» օրաթերթին համար թարգմանած է երկարաշունչ վէպեր, կարճ ու երկար գրութիւններ, իսկ Մխիթարեան սանուց միութեան թատերախումբին համար ալ՝ թատերգութիւններ: Արժանացած է բազմաթիւ պետական թէ՛ հոգեւոր մրցանակներու, շքանշաններու եւ սրբատառ կոնդակներու:

Օգտագործած է Ռ.Հ., Ռ., եւ Ռազմիկ գրչանունները:

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԱԾ ԳՈՐԾԵՐ

Ա.- Արձակ էջեր

– «Յակոբ Պարոնեանի մտերմութեան մէջ» (գրականագիտական), Պոլիս, 1965: Բ. տիպ՝ Պոլիս, 1999:

– «Բառասխալ. պատմուածքներ», Պոլիս, 1972:

– «Օրագրիս տասնհինգ էջերը» (ուղեգրութիւն), Պոլիս, 1977:

– «Մարդոց մեծութեան եւ խեղճութեան մասին» (պատմուածքներ), Պոսթըն, 1979:

– «Յուշատետր» Ա. (հրապարակագրութիւն), Պոլիս, 1982:

– «Առաստաղ» (վէպ), Պոլիս, 1983: Բ. տիպ՝ Պոլիս, 1998: (Ա. եւ Բ. միացեալ նոյն կողքի տակ) Երեւան, 2006: Գ. տիպ՝ (Բ. հատորին հետ միասին)՝ Պոլիս, 2020:

– «Յուշատետր» Բ., Գ., Դ., Ե. Զ. Է. Ը. Թ. (հրապարակագրութիւն), Պոլիս, 1984, «Յուշատետր» Ժ. Պոլիս, 1987:

– «Շնորհք արք. Գալուստեան՝ պատրիարք հայոց Թուրքիոյ» (յուշամատեան), Պոլիս, 1987:

– «Յիշելով մեր սիրեցեալ Շնորհք պատրիարքը» (յուշագրութիւն), Պոլիս, 1990:

– «Յուշատետր» ԺԱ., 1991, «Յուշատետր» ԺԲ., 1993 եւ «Յուշատետր» 13. «Աշնան վերջին գիշերը» (հրապարակագրութիւն), Պոլիս, 1995:

– «Հայկական առածներ» (հրապարա-

կագրութիւն), Անթիլիաս, 1995 («Յուշատետր»-ի շարքէ դուրս հրատարակութիւն):

– «Յուշատետր 26. Հայկական առածներու ներշնչումով» (հրապարակագրութիւն), Պոլիս, 1995: Բ. տպ., 2002:

– «Յուշատետր» (Ընտրանի) (հրապարակագրութիւն), Ս. Էջմիածին, 1998:

– «Յուշատետր 14. Հին հասցէներ...» (հրապարակագրութիւն), Պոլիս, 1999:

– «Յուշատետր 15. Գրական հաւաքոյթ Սոււտիյէի մեր պարտէզին մէջ», «Յուշատետր 16. Թելերը կ'երկարին կ'երթան», «Յուշատետր 17. Հողը ճակատագիր է», «Յուշատետր 19. Երեւանեան յուշատետր (1989) (ուղեգրութիւն), Պոլիս, 1999:

– «Յակոբ Պարոնեան վերադարձաւ (հրապարակագրութիւն), Պոլիս, 1999: Բ. տպ., Հալէպ, 2005:

– «Առաստաղին միւս կողմը (վէպ)», Պոլիս, 2000: Բ. տպ (Ա. հատորին հետ միասին)՝ Երեւան, 2006: Գ. տպ. (Ա. հատորին հետ միասին) Պոլիս, 2020:

– «Յուշատետր 18. Ծովը ամբողջութեամբ ճամբայ է (հրապարակագրութիւն)», Պոլիս, 2000:

– «Յուշատետր 39. Պտոյտ մը հայ բանաստեղծութեան պարտէզին մէջ» (հրապարակագրութիւն), Պոլիս, 2000: Բ. տպ., 2005:

– «Յուշատետր 32. Սրբալոյս միւռնը եւ կրակարանը» (հրապարակագրութիւն), Պոլիս, 2002:

– «Յուշատետր 37. Օտարականներ աշխատասենեակիս մէջ», Պոլիս, 2002:

– «Յուշատետր 41. Գուրթուլուշի պողոտայ, թիւ 86» (հրապարակագրութիւն), Պոլիս, 2002:

– «Յուշատետր 49. Հազար տարի Ս. Գրիգոր Նարեկացիի հետ (հրապարակագրութիւն), Պոլիս, 2003:

– «Դանիէլ Վարուժանի, Սիպիլի, Իգնատի Սարլասլանի բանաստեղծութիւնները հայ ուսանողներու մտերմութեան մէջ» (հրապարակագրութիւն), Պէյրութ, 2003 («Յուշատետր»-ի շարքէ դուրս հրատարակութիւն):

– «Յուշատետր 42. Օդանաւին անիւները» (հրապարակագրութիւն), Պոլիս, 2004:



– «Յուշատետր 44. Բնանկարներ (հրապարակագրություն), Պոլիս, 2004:

– «Յուշատետր 52. Պոլսահայ նոր բանաստեղծության վէպը. Կարապիտ Ճանճիկեան, Հայկազուն Գալուստեան եւ միւսները» (հրապարակագրություն), Պոլիս, 2004:

– «Յուշատետր 43. Ասիկա այբ է» (հրապարակագրություն), Պոլիս, 2005:

– «Ուղեւորութիւն դէպի միասնութիւն եւ կարօտ. Թարգմանչաց տօն մը թեհրանահայութեան մօտ» (ուղեգրություն), Պոլիս, 2006, («Յուշատետր»-ի շարքէ դուրս հրատարակութիւն):

– «Յուշատետր 47. Առագաստ՝ դէպի բանաստեղծութիւն» (հրապարակագրություն), Պոլիս, 2006:

– «Ինչե՞ր տեսանք, ինչե՞ր լսեցինք. Յօդուածներ. հատոր Ա.», (հրապարակագրություն), Պոլիս, 2007:

– «Ինչե՞ր տեսանք, ինչե՞ր լսեցինք. Յօդուածներ. հատոր Բ.» (հրապարակագրություն), Պոլիս, 2007:

– «Յուշատետր 59. Պտոյտ հայ գրականութեան քուլիսներուն մէջ» Ա. (հրապարակագրություն), Պոլիս, 2007: Բ. տիպ՝ Պոլիս, 2008:

– «Յուշատետր 60. Պտոյտ հայ գրականութեան քուլիսներուն մէջ» Բ. (հրապարակագրություն), Պոլիս, 2007: Բ. տիպ՝ Պոլիս, 2008:

– «Յուշատետր 61. Պտոյտ հայ գրականութեան քուլիսներուն մէջ» Գ. (հրապարակագրություն), Պոլիս, 2008: Բ. տիպ՝ Պոլիս, 2008:

– «Յուշատետր 62. Պտոյտ հայ գրականութեան քուլիսներուն մէջ» Դ. (հրապարակագրություն), Պոլիս, 2008:

– «Յուշատետր 63. Պտոյտ հայ գրականութեան քուլիսներուն մէջ» Ե. (հրապարակագրություն), Պոլիս, 2009:

– «Յուշատետր 64. Պտոյտ հայ գրականութեան քուլիսներուն մէջ» Զ. (հրապարակագրություն), Պոլիս, 2009:

– «Յուշատետր 20. Քանի մը ծառեր անտառին մէջ», (հրապարակագրություն), Պոլիս, 2009:

– Յուշատետր 21. Անկարելի նամակ մեր սիրելիներուն», (հրապարակագրություն), Պոլիս, 2009:

– «Յուշատետր 22. Մեր հայրերուն ժամացոյցը», (հրապարակագրություն), Պոլիս, 2010:

– «Յուշատետր 65. Պտոյտ հայ գրականութեան քուլիսներուն մէջ» Է. (հրապարակագրություն), Պոլիս, 2010:

– «Յուշատետր 66. Պտոյտ հայ գրականութեան քուլիսներուն մէջ» Ը. (հրապարակագրություն), Պոլիս, 2010:

– «Յուշատետր 67. Պտոյտ հայ գրականութեան քուլիսներուն մէջ» Թ. (հրապարակագրություն), Պոլիս, 2010:

– «Յուշատետր 71. Կեանքը խմբագրատունէն ներս» (հրապարակագրություն), Պոլիս, 2010:

– «Մեր մայրենի լեզուն մահամերձի անկողինին մէջ» (հրապարակագրություն), Պէյրութ, 2011:

– «Յուշատետր 23. Զրոյց՝ հինցած գրիչի մը հետ» (հրապարակագրություն), Պոլիս, 2011:

– «Յուշատետր 56. Հիւանդութեան օրեր» (հրապարակագրություն), Պոլիս, 2011:

– «Յուշատետր 78. Պտոյտ մը հայոց լեզուի բառարանին մէջ» Ա. (հրապարակագրություն), Պոլիս, 2011:

– «Յուշատետր 68. Պտոյտ հայ գրականութեան քուլիսներուն մէջ» Ժ. (հրապարակագրություն), Պոլիս, 2012:

– «Յուշատետր 79. Պտոյտ մը հայոց լեզուի բառարանին մէջ» Բ. (հրապարակագրություն), Պոլիս, 2013:

– «Յուշատետր 80. Պտոյտ մը հայոց լեզուի բառարանին մէջ» Գ. (հրապարակագրություն), Պոլիս, 2013:

– «Յուշատետր 81. Պտոյտ մը հայոց լեզուի բառարանին մէջ» Դ. (հրապարակագրություն), Պոլիս, 2013:

– «Յուշատետր 82. Պտոյտ մը հայոց լեզուի բառարանին մէջ» Ե. (հրապարակագրություն), Պոլիս, 2014:

– «Յուշատետր 83. Պտոյտ մը հայոց լեզուի բառարանին մէջ» Զ. (հրապարակագրություն), Պոլիս, 2014:

– «Յուշատետր 84. Պտոյտ մը հայոց լեզուի բառարանին մէջ» Է. (հրապարակագրություն), Պոլիս, 2015:

– «Յուշատետր 85. Պտոյտ մը հայոց լեզուի բառարանին մէջ» Ը. (հրապարակագրություն), Պոլիս, 2015:



կագրութիւն), Պոլիս, 2015:

– «Յուշատետր 86. Պտոյտ մը հայոց լեզուի բառարանին մէջ» Թ. (հրապարակագրութիւն), Պոլիս, 2017:

– «Յուշատետր 87. Պտոյտ մը հայոց լեզուի բառարանին մէջ» Ժ. (հրապարակագրութիւն), Պոլիս, 2017:

– Դուն աղա ես աղա մեր ալիւրը ո՞վ աղա», (հրապարակագրութիւն), Պոլիս, 2017 («Յուշատետր»-ի շարքէ դուրս հրատարակութիւն):

– «Յուշատետր 88. Մարդիկ, որոնք անցան կեանքիս մէջէն», Ա. (յուշագրութիւն), Պոլիս, 2017:

– «Յուշատետր 89. Մարդիկ, որոնք անցան կեանքիս մէջէն», Բ. (յուշագրութիւն), Պոլիս, 2018:

– «Յուշատետր 90. Մարդիկ, որոնք անցան կեանքիս մէջէն», Գ. (յուշագրութիւն), Պոլիս, 2018:

Բ.- Թատրերգութիւններ

«Կեանքի մը երեք կիրակիները», Պոլիս, 1959 («Սան»-ի բացառիկ համար, թիւ 87-88, օգոստոս 1959), «Կիրակնօրեայ հաշուեփակ», Պոլիս, 1973, «Վաստակ», Պոլիս, 1976, «Թատերախաղեր», Պոլիս, 2002: Կը պարունակէ Հատտէճեանի հրատարակած եւ անտիպ բոլոր թատրերգութիւնները՝ «Վաստակ», «Կեանքի մը երեք կիրակիները», «Կիրակնօրեայ հաշուեփակ», «Մարդը եւ իր Կեղեւը», «Քիչ մը գութ եւ երկու կաթիլ արցունք...», «Մահը ա՞յս է արդեօք»:

Գ.- Խմբագրական աշխատանք

– «Համայնապատկեր հանրապետական շրջանի իսթամպուլահայ գրականութեան», Պոլիս, 1957 (Վ. Ս. Ծովակի եւ Վարդան Կոմիկեանի աշխատակցութեամբ):

Դ.- Թարգմանական աշխատանք

– «Էրվին Մոսկուաի Էրօինի մաքսանենգները», Պոլիս, 1969, «Շթէֆան Յվայկ, ճատրակ խաղացողը», Պոլիս, 1969 (արտաքին կողքին վրայ 1970), «Երեք թատերախաղեր. Հարոլտ Բինթերի վարիսները, Միւրրէյ Շիսկելի վագրը, Ուիլիըմ Սարոյեանի սիրտս լեռնագաւառն է», Պոլիս, 2022:

Ե.- Օտար լեզուներով

– Tavan [առաստաղ] (թրքերէն թարգմ.

Անահիտ Հազարեան), Պոլիս, 1997: Բ. տիպ՝ 2018:

– «Տաղանդաւոր գործի մարդը» (վրացերէն թարգմ. Գիվի Լուարաբիշվիլի), Թիֆլիս, 1997:

Զ.- Անտիպ եւ հրատարակութեան պատրաստ

– «Յուշատետր» 24, 25, 27, 28, 29, 30, 31, 33, 34, 35, 36, 38, 40, 45, 46, 48, 50, 51, 53, 54, 55, 57, 58, 69, 70, 72, 73, 74, 75, 76, 77, 91 (հրապարակագրութիւն):

Է.- Իր մասին ուսումնասիրութիւններ

– Մաքրուի Պ. Յակոբեան, (խմբ.) «Ռոպեր Հատտէճեան գրական գործունէութեան 40-ամեայ հանգրուանին», Պոլիս, 1987:

– Սուրէն Դանիէլեան, «Ռոպեր Հատտէճեան. Ներաշխարհի գեղարուեստական քննութիւն», Պոլիս, 1996:

– Թորոս Թորանեան, «Ամբողջական գրագէտը. Ռոպեր Հատտէճեան», Հալէպ, 2002:

– Մաքրուի Պ. Յակոբեան, «Անվերջակէտ զրոյց՝ մեր գրական երախտաւորներուն հետ» (էջ 9-108), Պոլիս, 2013:

– Տիւնեայեան, Յակոբ (խմբ.) «Ռոպեր Հատտէճեանի հետ սիրտ-սիրտի», Պոլիս, 2020:

ՄԱՍԻՏԱՆԻ ՄՐՑԱՆԱԿՆԵՐ

– Համազգայինի «Անահիտ» գրական մրցանակ, «Ալեք Մանուկեան» մշակութային հիմնադրամի գրական մրցանակ (երիցս), «Վարդգէս եւ Ռիթա Պալեան» Հայ մամուլի մրցանակ, Թուրքիոյ հայոց պատրիարքութեան Ա. կարգի պատուոյ շքանշան, հայ կաթողիկէ պատրիարքութեան «Մկրտիչ Պէշիկթաշլեան» մետալ, Ս. Էջմիածնի «Ս. Սահակ-Ս. Մեսրոպ» շքանշան, Հայաստանի Հանրապետութեան «Մովսէս Խորենացի» պետական պատուանշան, ՀՀ «Մեսրոպ Մաշտոց» ոսկեայ շքանշան, Հայաստանի մշակոյթի նախարարութեան ոսկեայ շքանշան, Հայաստանի սփիւռքի նախարարութեան ոսկի մետալ, Հայաստանի Լրագրողներու միութեան «Ոսկէ գրիչ» մրցանակ, Հայաստանի Գրողներու Միութեան «Ոսկի մետալ» եւ բազմաթիւ օրհնութեան կոնդակներ եւ գնահատագիրներ:



ՄՏՔԻ ՕԶԱՊՏՈՅՑ ԹՌԻԶՔՆԵՐ

Ի՞նչ երգիծանք... հիմա որ ոչինչ ունիմ ընելիք, ժամացոյցին սլաքները առաւօտեան 5:00ը տակաւին ցոյց չտուած, արթուն եմ արդէն: Քունը խոյս կու տայ աչքերէս, ինչպէս դրամը՝ աղքատին գրպանէն: Սուրճիս գաւաթը առած պատշգամ կ'ելլեմ, ուրկէ կը դիտեմ արշալոյսին աղօթքի գացողներն ու թաղին ինքնաշարժները լուացող դռնապանները:

85 տարիներու բեռը թեթեւօրէն կը հանգչի ուսերուս վրայ: Ճերմակ մագերս կը հաւաքեմ երկու ծամակալերով, տան հագուստով ու մուճակով կ'ուղղուիմ դէպի Սաֆիր հրապարակին հանրակառքերու կայարանը: Ամայի է ամէն կողմ: Փողոցի անվնաս շուներու վոհմակը կ'ընկերակցի ինծի մինչեւ մայր պողոտայ:

Հելիոպոլսոյ կամարակապ շէնքերուն ներքեւի մայթերը խաղաղ են տակաւին: Միայն ամէն օր եկող, գետինը նստած բանջարեղէն-պտուղ ծախող կինը հոն է այս ժամուն, ապրանքը տեղաւորելու գործին վրայ: Հին ծանօթներու նման կը բարեւենք զիրար ու աննպատակ կը նստիմ մօտակայ կայարանին նստարանին վրայ: Այս ժամուն հանրակառք սպասող չկայ:

Որքա՞ն փոխուած են թաղին խանութները վերջին 40 տարիներուն: Երէկուայ պէս կը յիշեմ հրապարակը հսկող Չոլաքեան շէնքը, իր Խարինոս անուշավաճառ-սրճարանով, որ հիմա վերածուած է Pizza Hutի եւ KFCի:

Անկիւնը Փախչանեան լուսանկարիչն էր, որուն մայրիկը շատ յաճախ նստած կ'ըլլար հոն: Հիմա այդ լուսանկարչատունը վերածուած է Zikry դեղարանին:

Անոր քով կար Պապիկեան եղբայրներուն Cent Mille Articles խանութը, ուր յաճախորդները գնում ընելու զուգահեռ զրուցելով ժամանակ կ'անցնէին: Այդ ամէն տեսակ ապրանքներով խճողուած խանութը, երկուքի բաժնուելով մէջտեղ ելած են Ֆուլ-Թաամէյայի եւ փոքրիկ Cent Mille Articles խանութները:

Անկէ քանի մը խանութ վար կար Եղիա

կաթնավաճառը, որուն աշկերտ Ալին օրական թարմ կաթ կը բաժնէր, տուները շրջելով: Եղիային պտուկներու մէջ «բռնած» մածունին համը աննման էր:

Քիչ մը աւելի հեռու կար շապկագործ Սագլարեանը իր լայն ժպիտով ու մեծ փորով: Ասոնցմէ ո՛չ մէկը մնացած է այսօր, անոնք փոխարինուած են բջիջային հեռախօսներու եւ հագուստեղէնի վերաբերեալ աննկարագիր խանութներով, որոնց գործունէութիւնը կը փոխուի շուտ-շուտ: Նոր խանութպանները կը ճանչնան ու կը յարգեն զիս, որպէս թաղին «հնութիւններէն» մէկը:

Խորասուզուած յիշատակներուս մէջ, չեմ նկատած որ թաղին ծերուկ դռնապանը «Բարի լոյս» մաղթեր է ինծի: Միայն երբ անպատասխան մնացած, գլուխը շարժելով հեռացաւ, յանկարծ կը սթափիմ ու բարձրաձայն «բարի լոյս» կը պոռամ ետեւէն:

Կայարանը նստած եմ ո՛չ թէ հանրակառք սպասելու, արդէն երթալիք տեղ ալ չունիմ, այլ որպէս ժամանց, որպէս փախուստ իմ դատարկացած տունէն:

Կամաց-կամաց օրուան եռուզեռը կը սկսի, արեւը իր տեղը կը փոխէ, կը բարձրանայ երկինքէն վեր: Հանրակառք քշողներէն ոմանք կը ճանչնան զիս. չէ՞ որ ամենայն հաւատարմութեամբ, գրեթէ ամէն օր կը գտնուիմ հոն: Շատերը կը բարեւեն, «Ինչպէ՞ս ես, մայրի՛կ, ո՞ր կ'ուզես երթալ» կ'ըսեն կատակով ու կը շարունակեն իրենց ճամբան:

Շատ յաճախ, երիտասարդ մը, ենթադրելով որ անկարող եմ հանրակառք բարձրանալու, օգնութիւն կ'առաջարկէ: Կ'ամչնամ ըսելու որ այստեղ նստած կ'անցնեմ օրուան մեծ մասը. «շնորհակալ եմ, քիչ մը կը հանգչիմ, յետոյ տուն պիտի երթամ», կ'ըսեմ: Սակայն տուն երթամ ի՞նչ ընելու... քայլերուս արձագանգը կը լսեմ շունչէ զուրկ, լայնատարած, դատարկ յարկաբաժնիս մէջ:

Բազմանդամ ընտանիքի մէջ ծնած մեծցած աղջիկ մըն էի: Մօրենական մեծ



ծնողներս կ'ապրէին մեր հինգ հոգինոց ընտանիքին հետ: Երբ 1948-ին դէպի Սովետական Հայաստան ներգաղթի հոսանքը սկսաւ, հայրիկս քաջալերուեցաւ: Մարաշցի նահատակուած մեծ ծնողներուն արիւնը եռաց երակներուն մէջ: «Երթանք հայրենիքը կերտենք», կ'ըսէր օրն ի բուն:

Ընտանիքին փոքրիկը ըլլալու, շատ բան չէի հասկնար: Մինչ մեծ եղբայրս ու քոյրս հայրենիքի տեսարժան վայրերուն ու յուշարձաններուն նկարները արդէն փակցուցեր էին մեր ննջասենեակին պատերուն վրայ, մայրիկս տխուր էր ու լուռ: Ինչպէ՞ս պիտի լքէր իր ծնողքը, որ անկարող էր ճամբորդելու: «Գնա՛ աղջիկս, մի՛ մտածեր մեր մասին, երջանիկ ու խաղաղ կեանք ապահովէ զաւակներուդ համար հայրենի հողին վրայ», կ'ըսէր ու կը պնդէր մեծ մայրիկս: Սակայն ծերուկ ու լռակեաց մեծ հայրիկս տխո՛ւր-տխո՛ւր մեր վրայ կը նայէր:

«Ի՞նչ կ'ըլլայ եթէ Արամ, դո՛ւն միանաս կարաւանին», 18 տարեկան եղբօրս ուղղելով խօսքը ըսաւ մայրիկս. «Երբ հասնիս, տեղաւորուիս, մենք բոլորս կը միանանք քեզի», աւելցուց:

«Այո՛, ես կ'երթամ հայրենիք ու հոն համալսարան կը մտնեմ», երկրորդեց եղբայրս մեծ խանդավառութեամբ: Հայրս շատ գոհ չէր այս կարգադրութիւնէն, սակայն հինգ հոգինոց ընտանիքը շարժել դէպի անորոշութիւն, խոհեմութիւն չէր: Վերջապէ՛ս, հանգիստ կեանք ունէինք Եգիպտոս:

Տրուած ըլլալով որ երիտասարդ մը առանձին չէր կրնար գաղթել դէպի հայրենիք, ծանօթ ընտանիքի մը միացուցին Արամը: Տաք հագուելիք, վերարկու, ծածկոց, փոխնորդ... բերնէ-բերան թխմուած էին Արամին ճամպրուկներուն մէջ: Վերջին գիշերը շատ տխուր անցաւ. սակայն հզօր ու ծաղկած հայրենիքին մէջ ապրելու հեռապատկերը ուրախութեամբ լեցուցած էր Արամին սիրտը:

«Եթէ լուրերը լաւ ըլլան, յաջորդ տարի բոլորս պիտի միանանք իրեն», մտածելով կը մխիթարէինք մենք զմեզ: Հայրս խոհեմութիւնը ունեցեր էր գաղտնի բա-

ռեր ու նշաններ որոշել Արամին հետ, որպէսզի եթէ հակառակ պարագային պէտք ըլլար, գործածէր զանոնք իր գրած նամակներուն մէջ: Մեծ հանդիսութեամբ, մեզի հետ մեծ թիւով եգիպտահայեր, Արամը ճամբու դրինք Աղեքսանդրիոյ նաւահանգիստէն:

Երբ քանի մը ամիս ետք առաջին նամակը հասաւ, մեծ հայրիկս մահացեր էր արդէն: Գոհ էր Արամը հայրենիքի մէջ, Երեւանի համալսարանը արձանագրուած էր, իրեն մէկ սենեակնոց բնակարան մը տրամադրած էին, հոգ չէ թէ հետը տարած ապրանքներուն մեծ մասը ձեռքէն առնուած էր:

Կ'ուզէինք գիտնալ թէ յարմա՞ր էր որ մենք ալ միանայինք իրեն. «Այո՛», հոս կեանքը շատ լաւ է ու հանգիստ, եկէ՛ք, սակայն մեծ հայրիկը ձեր հետ բերէք անպայման», գրած էր, որմէ հասկցանք որ «մի գաք» ըսել կ'ուզէ: Սկիզբը դրկած լուսանկարին մէջ ան հպարտօրէն կանգնած էր շոգեկառքի կայարանին դիմաց, Սասունցի Դաւիթին արձանին տակ: Յաջորդներուն մէջ անժպիտ նստած էր պարտէզի մը մէջ, մարգագետնին վրայ: «Վիճակը շատ վատ է», հասկցնել կ'ուզէր: Հայրենիք երթալու գաղափարը ջնջեցինք մեր միտքերէն, խեղճ եղբօրս վրայ եղած փորձէն ետք:

1958-ը տխուր տարի մը եղաւ մեր ընտանիքին համար, ետեւէ-ետեւ կորսնցուցինք մեծ մայրիկս ու հայրիկս: Մեծ քոյրս, որ American College for Girls-ը աւարտած էր, դիմեց Միացեալ Նահանգներ գաղթելու, ընդունուեցաւ ու մեկնեցաւ: Ան միացաւ մեր եղբօրը, որ տարիներ շարունակ հայրենիքէն հեռանալ փորձելէ ետք, յաջողեր էր Ֆիլատելֆիա հասնիլ:

Ես, որպէս դաշնամուրի ուսուցչուհի, հանգիստ գործ ունէի Հելիոպոլսոյ Delivrande վարժարանին մէջ եւ մասնաւոր դասեր ալ կու տայի փափաքողներուն: Տարիները անցան, մայրս մահացաւ 2000-ին. այդ թուականէն ի վեր առանձին կ'ապրիմ:

Մինչեւ Գորոնա Ժահիրին յայտնուիլը Մարտ 2020-ին աշխոյժ էի ու գործունեայ: Սակայն Գորոնային պարտադրած արգե-



ՎՍՏԱՀՈՒԹԵԱՆ ԱՐԱՐՔ ՄԸ

Ինչպես գրած էինք «Տեղեկատու»ի նախորդ համարին մէջ («Տեղեկատու» նոր շրջան, Յուլիս 2025, թիւ 116, էջ 25), Ալ. Սարուխանի ամբողջ արխիւը 1987 թուականին պահ դրուած է Երեւանի Գրականութեան եւ Արուեստի Թանգարանին:

Անկէ բաւական ետք՝ 2016-էն սկսեալ, Սարուխանի թոռնուհին՝ տիկին Սիլվա Ներետեան-Բլատեան, դարձեր է պատասխանատուն նոր արխիւին, որ գլխաւորապէս կը բաղկանայ թերթերէ եւ հանդէսներէ - որոնց մէջ Սարուխանի եւ անոր արուեստին մասին գրութիւններ երեւցած են - ինչպէս նաեւ լուսանկարներէ, վկայագրերէ, յայտագրերէ եւ գիրքերէ:

Տիկին Բլատեան նաեւ հոգածուն է (curator) Սարուխանի գործերուն, նկարներուն, եւ պատասխանատուն, երբեմն նաեւ շարժիչ ոյժը Սարուխանի նուիրուած

ձեռնարկներուն, անոր մասին նոր հրատարակութիւններուն կամ վերատպութիւններուն:

Մենք սիրայօժար կերպով ուզեցինք կազմել այս բոլոր նիւթերուն մատենագիտական ցանկը:

Այսօր շնորհակալութեամբ կրնանք յայտարարել, որ տիկին Բլատեան յարմար դատեց արխիւային այդ բոլոր դասաւորուած նիւթերը տալ մեզի՝ «Վ. Ճիգմէճեան» արխիւատան մէջ պահելու համար:

Եգիպտահայութիւնը, ինչպէս նաեւ Եգիպտոսի պետութիւնն ու ժողովուրդը հպարտ են այսօր նման արուեստագէտ մը ունենալու համար: Այս հպարտութիւնը ի յայտ եկաւ մանաւանդ վերջին տարուան ընթացքին, Սարուխանի ծննդեան 125-ամեակին նուիրուած մէկէ աւելի հանդիսութիւններուն ընդմէջէն:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՐԵՒՈՏ ԳԻՒՂԵՐԸ

Հայաստանի գիւղերը ընդհանրապէս հաճելի անուններ ունին, բայց ուշադրութեան արժանի են այն բազմաթիւ գիւղերուն անունները, որոնք արելը ունին որպէս արմատ, ինչպէս օրինակ.

Արելիս, Արփենի, Արեգնադէմ, Արեւաշատ, Արեւշատ, Արեւուտ, Արեւաբոյր, Արեւաշող, Արեւադաշտ, Արեւածագ, Արփունք, Արեգունի, Արելիկ, Արեգ, Արփի:



լափակումներն ու իմ անբացատրելի սարսափը այս համաճարակէն, մոռցուցին բնականոն կեանքս: Ժամանակուան բարեկամներու այցելութիւնները անցեալի պատկանիլ սկսան ու կամաց-կամաց անջատուեցանք իրարմէ: Շատեր հրաժեշտ տուին կեանքին, իսկ ողջ եղողները կքեցան իրենց տարիքին ու վատառողջութեան ծանրութեան ներքեւ:

Փառք Տիրոջ ոտքի եմ ու տարիքիս համեմատ՝ բաւական առողջ : Առաւօտները Սաֆիրի հանրակառքին կայարանը անցնելը եղած է իմ միակ զբօսանքը: Հիմա արդէն կէսօրէ ետք է: Տուն երթամ, որպէսզի վաղը նորէն գամ:

Սօսի Ներսիսեան-Յակոբեան
Յուլիս 2025



ԿԱՐՃ ԼՈՒՐԵՐ

ԱՅՍ ԱՆԳԱՄ ՀԱՅ ՄԸ ՉԷ

«Մի՛ մոռնաք մեր Հայաստանը» վեպին հեղինակը՝ Եահիա Պելասքրի, ծնած է 1952-ին, Օրան քաղաքը. ունի բազմաթիվ վեպեր, որոնց համար ստացել է մեկից ավելի մրցանակներ:

Իր վերջին վեպը հայոց ցեղասպանության մասին է: Հերոսուհին՝ Մարիճան բժշկուհի է: 1909 թուականին Կոստանդնուպոլսին կու գայ, մարդասիրական առաքելութեամբ եւ կը հիւրընկալուի Ատանայի վանքերէն մէկուն մայրապետներուն քով, որոնք զինք կ'անուանեն «Կապոյտ աչքերով Մարիճան»: Երեկոյեան պատարագի ժամանակ Հայր Բիւրակը պատարագիչ է: Աւելի ուշ, շա՛տ ավելի ուշ՝ հայ Բիւրակը Մարիճային կ'ըսէ, թէ իր կապոյտ աչքերը բանաստեղծութեան կը նմանին:

Անոնց ճամբաները զիրենք միջնաբերդէ միջնաբերդ կը տանին: Ատանայէն, ուր տեղի ունեցեր են հայոց ցեղասպանութեան նախորդած կոտորածները, մինչեւ Հալէպ, ապա կարաւանով դէպի Սամարգանտ, միշտ դէպի ավելի արեւելք: Անոնք փախեր են Օսմանեան կայսրութենէն, ամէն տեղ փորձելով օգնել, թերեւցնել գաղթականներուն տաժանքը եւ փրկել անոնց, որոնց կը հանդիպին: Մարիճան աքսորի այս չվերջացող պատմութիւնը գրել է, չմոռնալով իր սեփականը, երբեք չմոռնալով, թէ ուրկէ եկել է: Հայ ժողովուրդին նուիրուած սիրոյ գեղեցիկ պատմութիւն մը:



ԵՐՈՒԱՆԴ ՔՈՉԱՐ

Վերջերս Երուանդ Քոչարի 1920-ականներու գործերէն զարմանալիօրէն գեղեցիկ, ծաւալային գործ մը աճուրդով ծախուել է... միայն 35 հազար ԱՄՆ տոլարի: Նման աշխատանքներու օրինակներ՝ հայկական **աւանկարփի** ամենէն նորարարական գործեր չկան Հայաստանի որեւէ թանգարանի մէջ: Այս ստեղծագործութիւնը, հաւանաբար շարունակ կը տեղափոխուի անհատական հաւաքածոներու մէջ, հանրութեան աչքէն հեռու:

Չկա՞ր գոնէ մէկ հայ մեծահարուստ, որ գնէր զայն...



ԲՐԱԹԵԱՆ ԴԱՓՆԵԿԻՐ

Լեհաստանի Կտանսկ քաղաքին մէջ կայացած «Մոցարտի Միջազգային Երաժշտական մրցոյթը», որ երկու հանգրուան ունէր եւ որուն ավելի քան երեսուն երիտասարդ դաշնակահարներ մասնակցել էին:

Երիտասարդ դաշնակահար իրանահայ Դերէն Բրաթեանը կրցաւ ոչ միայն ընտրուիլ եզրափակիչ կարճ ցուցակին մէջ, այլեւ դառնալ Ոսկէ դափնեկիր:

Մրցոյթին Բրաթեան ներկայացուց Հայաստանը եւ կատարեց Կոմիտասի «Կռունկը», Սարաջեանի մշակմամբ:

Բրաթեան ունի հայկական մեղեդիներու հիման վրայ կատարուած մշակումներու խտասալիկ մը, Lux Aeterna խորագրուած:




UNIVERSITY GAMES 2025

Գերմանիոյ մէջ 16-27 Յուլիսին կայացած Համաշխարհային Համալսարանական Ամառնային խաղերուն (FISU World University Games 2025) նժոյգ ձիու մարզաձեւը պսակուեցաւ հայկական մարմնամարզութեան ծագող աստղ Համլետ Մանուկեանի փայլուն յաղթանակով:

17-ամեայ հայ մարզիկը տպաւորիչ էր գեղեցիկ եւ հզօր ելոյթով՝ շահելով 14.933 միաւոր:

Հայաստանի երկրորդ ներկայացուցիչ Մամիկոն Խաչատրեանը շահեցաւ 11.933 միաւոր եւ նուաճեց 7-րդ տեղը:

Հայ մարմնամարզիկները յաճախ յաջողութեամբ կ'աւարտեն իրենց մասնակցութիւնը համալսարանական միջազգային այս խաղերուն:



ԱՆԻ ՄԵԼԻՔԵԱՆ ԱՌԱՋԻՆ

Երեւանի Չայքովսքիի միջնակարգ երաժշտական մասնագիտական դպրոցի 2-րդ դասարանի սան Անի Մելիքեանը արժանացեր է «Grand Prize Virtuoso» միջազգային երաժշտական մրցոյթի առաջին կարգի մրցանակի:

Մրցոյթը տեղի ունեցեր է Մոցարտի ծննդավայր Աւստրիոյ Սալցպուրկ քաղաքը: Փոքրիկ Մելիքեանը մրցոյթին նուագեր է հայ ժամանակակից երգահան Արամ Սաթեանի «Barcarole» ստեղծագործութիւնը:

«Որոշեր էինք երոպացի հանդիսատեսին ներկայացնել հայ ժամանակակից երգահանի ստեղծագործութիւն, որպէսզի ցոյց տանք, որ հայկական դասական երաժշտութիւնը կը շարունակէ ծաղկիլ եւ զարգանալ», – «Արմենփրես»-ի հետ զրոյցի ընթացքին ըսեր է Անիի ուսուցչուհին՝ Երեւանի Կոմիտասի անուան պետական երաժշտանոցի դասախօս Իրինա Գրիգորեանը:



ՆԱԽԱԳԱՀԸ՝ ԳԱԳԱԹԻՆ

ՀԲԸՄիութեան Հայաստանի նախագահ Վազգէն Եագուպեան կը գրէ իր դիմատետրեան էջին մէջ.

«2025 թուականի Օգոստոսի 14-ին եւ իրականացուցի կեանքիս երազանքներէն մէկը, հասնելով վեհաշուք, Աստուածաշնչեան Արարատ լեռան գագաթը (5137 մ)՝ մեր ազգի դիմադրողականութեան յաւերժական խորհրդանշը:

Բարձրանալը շատ աւելին էր, քան պարզ արշաւ մը: Ուխտագնացութիւն էր դէպի սրբազան գագաթ, որ հազարամեակներ շարունակ հսկեր է մեր նախնիները եւ ներկայիս՝ հայկական հողերը: Ան զիս փորձութեան ենթարկեց ֆիզիկապէս, մտաւոր եւ յուզական առումով, եւ ես խորապէս երախտապարտ եմ, որ այս փորձութիւնը ապրեցայ զակիս՝ Լեւոնին հետ:

Մեր ճամբորդութեան ընթացքին այցելեցինք նաեւ Կարս, Վան/Տուշպա, Աղթամար, ուր աղօթեցինք եւ մոմեր վառեցինք Սուրբ Խաչ եկեղեցոյ մէջ, լողացինք Վանա լճին մէջ եւ քալեցինք մեր փառահեղ մայրաքաղաք Անիի հին փողոցներէն:

Ինձի համար Պատմական Հայաստանը միայն յիշողութիւն չէ. ան հպարտութեան, ոյժի եւ ոգեշնչման կենդանի աղբիւր է, աւելի ուժեղ Հայաստան եւ աւելի դիմացկուն ազգ կառուցելու համար»:

Նախագահը գագաթ հասնելով բարձրացուցեր է Հայաստանի, Արցախի, Էջմիածնի եւ ՀԲԸՄիութեան դրօշակները:





ՄՐՑԱՆԱԿՆԵՐ

Հայաստանի աւագ դպրոցի աշակերտները երկու արծաթ եւ մէկ պրոնզ մետալ շահած են աստղագիտութեան եւ աստղաբնագիտութեան միջազգային 18րդ ողիմպիականին (IOAA), որ տեղի ունեցաւ Օգոստոս 11 - 21, Հնդկաստանի Մումպայ քաղաքին մէջ:



ԱՆՈՒՆՆԵՐ

Իտալիոյ եպիսկոպոսներու համաժողովի ղեկավար գարտինալ Մաթէօ Զուպպին Հինգշաբթի, Օգոստոս 14-ին, Իտալիոյ Մարզապոթթօ քաղաքին մէջ ղեկավարեց եօթժամեայ աղօթքի հսկողութիւն մը, որուն ընթացքին բարձրաձայն կարդաց 2023 թուականէն ի վեր Կազայի մէջ զոհուած իւրաքանչիւր երեխայի անունը:



«Մենք մէկ առ մէկ կ'արտասանենք անոնց անունները: Անոնք մեր բոլորէն կը խնդրեն գտնել խաղաղութեան ուղին եւ զայն աւելի մեծ խելքով եւ կիրքով փնտռել», - ըսաւ Գարտինալ Զուպպին, Վերափոխման Տօնի նախօրէին կազմակերպուած հսկումին սկիզբը:

Հսկումը տեղի ունեցաւ Զուպպիի թեմին մօտ գտնուող Մոնթէ Սոլէ տի Մարզապոթթօ պարտէզին մէջ: Վայրը խիստ խորհրդանշական էր՝ Կասալիոյ եկեղեցիին աւերակներուն մէջ, որ քանդուեր է նացիներուն կողմէ 1944 թուականին, եւ որուն հետեւանքով զոհուեր են գրեթէ 800 անձեր, մեծ մասը երեխաներ:

Հսկողութեան ընթացքին Գարտինալ Զուպպին եւ թեմի տասնեակ մը անդամները կարդացեր են 2023 թուականի Հոկտեմբերի 7-ին, Համասի յարձակման ժամանակ զոհուած 16 իսրայէլցի երեխաներու անուններն ու տարիքը, ինչպէս նաեւ մինչեւ 2025-ի Յուլիս 25-ը Կազայի մէջ զոհուած 12,211 պաղեստինցի երեխաներուն անունները: Իսրայէլցիներուն անունները առնուեր են կառավարութեան արձանագրութիւններէն, մինչ պաղեստինցիներուն անունները առնուեր են Կազայի առողջապահութեան նախարարութենէն: Փաստաթուղթը բաղկացած է 469 էջերէ, եւ կարդալու համար պահանջուեր է եօթը ժամ:

ՃԱՆԻԿԵԱՆ ԵՒ «ՕՐԱԳՐԵՐԸ»

Այս տարուան Վենետիկի ֆիլմի փառատօնին հայ-իտալացի բեմադրիչ Երուանդ Ճանիկեան կը ներկայացնէր «Անժելայի օրագրերը՝ երրորդ մաս» ֆիլմը, որ յարգանքի յուզիչ տուրք է իր հանգուցեալ գործընկերոջ եւ գործակից Անժելա Ռիչի Լուկիին:

Հայ ծնողներէ Իտալիա ծնած Ճանիկեան վաղուց հանրածանօթ է որպէս փորձարարական ֆիլմի ինքնուրոյն ծայն մը, որ յայտնի է արխիւային նիւթեր եւ յիշողութիւններ արուեստի գործերու վերածելու իր ոճով:

«Անժելայի օրագրեր 1-ը եւ 2-ը» ցուցադրուեր են Վենետիկի ֆիլմի փառատօններուն 2018 եւ 2019 թուականներուն: Այս նոր ֆիլմին մէջ Ճանիկեան կը դիմէ Ռիչի Լուկիի սեփական օրագրերուն եւ արխիւներուն, շարունակելով այս զոյգին ամբողջ կեանքի ընթացքին յիշողութեան, սիրոյ եւ արդիական ֆիլմի ուսումնասիրութիւնը:



ՄԵԼԱՆԻ ՓԱՐԹԱՄԵԱՆ

Սեպտեմբեր 1-25-ին, ժամանակակից արուեստի Մետրար ցուցասրահին մէջ (Կարտըն Սիթի, Գահիրէ) կայացաւ երիտասարդ արուեստագիտուհի Մելանի Փարթամեանի (ծն. 1999, Գահիրէ) անհատական ցուցահանդէսը՝ «Իմ տունս զիս այլ կերպով կը յիշէ» (My Home Remembers me Differently):



Ցուցահանդէսը իր ընտանիքին պատմութիւնն է՝ պատերազմի եւ ցեղասպանութեան պատճառով անոր տեղահանումը Յունաստանէն, Սուրիայէն եւ Հայաստանէն դէպի Եգիպտոս: Նկարչուհին համար տունը կը հանդիսանայ կորուստի, երեւակայութեան եւ վերակառուցումի միջոցով ձեւաւորուած տարածութիւն, որ տեղահանութեան եւ ժառանգուած ցնցումի պատճառով կը դառնայ անկայուն, մասնատուած եւ խուսափողական:

«Զահակիր» թիւ 2002

ԲԱՐԵԻ-ԱԼԱՅՔՈՒՄ

Շաբաթ, Սեպտեմբեր 27-ին, Բարեի-Ալայքում համայնքը կազմակերպեց շրջագայութիւն Գահիրէ քաղաքի կեդրոնը՝ նուիրուած եգիպտահայ մշակոյթին:

Բարեի-Ալայքում մաս կը կազմէ Քահրաուիայի (Qahrawya), որ արուեստի, մշակոյթի, միտքի եւ ժառանգութեան այլընտրանքային համայնք մըն է: Քահրաուիա իր ծրագիրին մէջ ունի տարբեր մշակոյթներու շրջագայութիւններ Գահիրէի մէջ:




Հայկական շրջագայութիւնները՝ Բարեի-Ալայքում անունով, հիմնած է Մելանի Փարթամեան, 2023-ին, զոր կը վարէ մինչեւ այսօր: Ալայքում կրճատումն է արաբերէն ալ-սալամու ալայքում-ի, որ կը նշանակէ բարեւ ձեզի: Ուրեմն, բարեւ՝ հայերէն եւ արաբերէն: Քաղաքի կեդրոնի Սեպտեմբեր 27-ի շրջագայութիւնը կը նաւարկէ անցեալի եւ ներկայի ընդմէջէն, սուզուելով Եգիպտոսի պատմութեան ականառու հայ գործիչներու հարուստ պատմութիւններուն մէջ: Ան կը բովանդակէ քաղաքին կեդրոնն ու եգիպտահայ պատմութիւնները, Հայ Կաթողիկէ եկեղեցին՝ դուրսէն, հայկական մանր ուտելիքներու համտեսում, հայեացք հայկական արհեստին, **ինքերաքթիւ** ճատրակի խաղ, տեսողական արուեստի տարածութիւններ, եւ այլն:

«Զահակիր» թիւ 2002

ԱԼԻՍ ԹՈՐԵԱՆԻ «ԶՄԻՒՆԻՈՅ ՀՐԴԵՀԻ ԱԿԱՆԱՏԵՍԻ ՊԱՏՄՈՒԹԻՒՆԸ»

Ալիս Թորեանի «Մանկութիւնս առանց գարունի. Զմիւռնիոյ մեծ հրդեհի ականատեսի պատմութիւնը» յուշագրութիւնը 2025 թուականի աշնան հրատարակուել է անգլերէն լեզուով: Անոր թողը՝ Փիթըր Թորեան անհատապէս հրատարակել է գիրքը, որպէս յարգանքի տուրք իր մեծ մօր յիշատակին:

Առաջին անգամ անգլերէն լեզուով հրատարակուած այս 50-ամեակի հրատարակութիւնը կը պատմէ Հայարփի «Ալիս» Թորեանի ապրած ականատեսի վկայութեան եւ տառապանքներուն մասին, Հայոց ցեղասպանութեան եւ Զմիւռնիոյ մեծ հրդեհին ընթացքին:





ՍԻՐԱՆՈՍԵԱՆ ՊԱՐԳԵՒԱՏՐՈՒԱԾ

Հայ թաւջութակահարուհի Աստղիկ Սիրանոսեան պարգեւատրուել է Ֆրանսայի ազգային արժանիքներու շքանշանով (French National Order of Merit), որ Ֆրանսայի բարձրագոյն պարգեւներէն մէկն է:

Արարողութիւնը տեղի ունեցեր է 25 Սեպտեմբերին, Փարիզի École Normale երաժշտանոցէն ներս, ուր ներկայ էին Աստղիկի ընտանիքի անդամները, ընկերները եւ աջակիցները: Սիրանոսեանը ծանօթ է ոչ միայն որպէս փայլուն միջազգային երաժիշտ, այլ նաեւ երաժշտութիւնը մշակոյթի եւ հաղորդակցութեան լեզու դարձնելու իր ջանքերուն համար:

Լիոն (Ֆրանսա) ծնած Սիրանոսեան ելոյթ ունեցեր է համաշխարհային բեմերու վրայ, ինչպէս Քարնըկի Հոլ, Վիեննայի Musikverein-ը եւ Փարիզի ֆիլհարմոնիան: Անոր երաժշտութիւնը կը համատեղէ հմտութիւնը յուզաթաթաւ ոճի հետ, զինք դարձնելով այսօրուան դասական երաժշտութեան ամենածանօթ անուններէն մէկը:



«ԿԱՐ ՈՒ ՉԿԱՅ»

Շարժապատկեր մը, որ կը պատմէ կորսուած Արցախի մասին եւ որուն խորագիրը կու գայ հայկական հեքեաթներու սկիզբի «Կար ու Չկար» խօսքէն՝ “There was, there was not”, Էմիլի Մկրտիչեանի բեմադրութեամբ:

Ֆիլմը կը հետեւի չորս կիներու, որոնք պատերազմին որպէս հետեւանք բազմաթիւ դժուարութիւններ ունին, մինչ կը գտնուին այլ պատերազմի մը անդունդին կողքին: Այս անորոշութեան մէջ չորս կիները կը փորձեն իրենց տուններուն մէջ կեանքը ոչ միայն տանելի, այլ եւ լաւ դարձնել:

Բայց երբ կը սկսի յաջորդ պատերազմը, կը ստիպուին զէնք վերցնել, ապա փախչիլ տուններէն: Իւրաքանչիւր կնոջ կեանքը անդառնալիօրէն կը փոխուի: Անոնց կեանքը կը դառնայ կորսուած հայրենիքի առասպելը եւ պատմութեան ոյժը, այդ առասպելը կենդանի պահելու:





ԱՂԵՔՍԱՆԴՐԻՈՅ Հ.Մ.Ը.Մ. ԿԱՄՔԻՆ ՄՐՑԱՇԱՐՔԸ

Ուրբաթ 22, Շաբաթ 23 եւ Կիրակի 24 Օգոստոս 2025-ին տեղի ունեցաւ Հ.Մ.Ը.Մ. Կամքի տարեկան եգիպտահայ երկսեռ պասքէթ-պոլի մրցաշարքը, հովանաւորութեամբ Գերշ. Տ. Աշոտ Եպս. Մնացականեանի՝ բարեխնամ առաջնորդ եգիպտոսի հայոց թեմին եւ նախագահութեամբ Տէր եւ Տիկին Կարի Պոհնալեանի:

Միայն երեք աղջիկներու խումբեր՝ Գահիրէի ՀՄԸՄ ՆՈՒՊԱՐԻ, Հ.Մ.Ը.Մ. Արարատը եւ Հ.Մ.Ը.Մ. Կամքը կը մասնակցէին այս մրցաշարքին, ուստի յայտագրին վրայ նշուած էր, թէ իւրաքանչիւր խումբ պիտի խաղար միւս երկու խումբերուն դէմ, անկախ խաղերուն արդիւնքէն: Երկու յաղթանակ ձեռք ձգած խումբը, Կիրակի օր պիտի ստանար բաժակը: Պարագաներուն համեմատ գաղափարը գէշ չէր: Սակայն մրցումներուն շարքը, որ դիտել կու տար, թէ Կամքի աղջիկները Կիրակի օր պիտի խաղային, անհամ կացութեան մատնած էր բաժակը յանձնելու արարողութիւնը:

Ուրբաթ օրուան առաջին մրցումը ՀՄԸՄ ՆՈՒՊԱՐԻ եւ Կամքի աղջիկներու խումբերուն միջեւ էր: Խիստ միակողմանի խաղէ մը ետք ՀՄԸՄ ՆՈՒՊԱՐԻ աղջիկները յաղթեցին 53-13 արդիւնքով:

Յաջորդ մրցումը երկու ՀՄԸՄ ՆՈՒՊԱՐԻներուն տղոց խումբերուն միջեւ էր. Աղեքսանդրիոյ խումբը բաւական լաւ դիմադրութիւն ցոյց տուաւ մինչեւ երկրորդ քառորդախաղի աւարտը. արդիւնքը 38-24 էր, ի նպաստ Գահիրէի ՀՄԸՄ ՆՈՒՊԱՐԻին: Սակայն հետզհետէ տարբերութիւնը աւելցաւ ու մրցումը աւարտեցաւ 81-46 արդիւնքով, ի նպաստ Գահիրէի մարզիկներուն:

Օրուան երրորդ խաղը Հ.Մ.Ը.Մ. Կամքի եւ Սրբուհի Թերեզայի տղոց խումբերուն միջեւ էր. անսպասելիօրէն շատ տաք ու հետաքրքրական մրցում մը ի յայտ եկաւ: Ուժերը հաւասար ըլլալուն, անկարելի էր կռահել թէ ո՞ր խումբը յաղթական պիտի ըլլար: Իրօք, մրցումը աւարտեցաւ 58-58 հաւասարութեամբ: Պէտք եղաւ յա-

ւելուած ժամանակ խաղալ. վերջապէս Կամքը կրցաւ յաղթական հանդիսանալ 68-64 արդիւնքով:

Շաբաթ օրուան ՀՄԸՄ ՆՈՒՊԱՐԻ եւ Հ.Մ.Ը.Մ. Արարատի աղջիկներու խումբերուն միջեւ մրցումը շատ հետաքրքրական էր: Առաջին քառորդախաղին, ինչպէս միշտ, երկու կողմերուն մարզիկուհիները պրկուած ջիղերով չափազանց արագ կը խաղային ու անտեղի սխալ արձակումներով չէին կրնար արդիւնք արձանագրել: Սակայն, հետզհետէ, ՀՄԸՄ ՆՈՒՊԱՐԻ աղջիկները, բարելաւելով իրենց խաղը, յուսալքութեան մատնեցին մրցակից խումբը եւ մրցումը աւարտեցին 67-42 արդիւնքով, ի նպաստ իրենց: Վարձքը կատար խումբին պատասխանատու Սեւան Տրդատեանին եւ անոր օգնական Արեգ Աբգարեանին այս յաղթանակին համար:

ՀՄԸՄ ՆՈՒՊԱՐԻ աղջիկները արդէն տարած էին երկու յաղթանակ ու արժանի էին բաժակը ստանալու, սակայն մրցաշարքին կազմակերպիչները որոշած էին բաժակը այդ օր չյանձնել ...: ՀՄԸՄ ՆՈՒՊԱՐԻ յաղթական աղջիկները պէտք էր Կիրակի իրիկուն, Արարատի եւ Կամքի աղջիկներուն մրցումէն ետք ներկայանային, ստանալու համար բաժակը: Աւելի տրամաբանական պիտի չըլլա՞ր եթէ բաժակը Շաբաթ օր յանձնուէր ՀՄԸՄ ՆՈՒՊԱՐԻ աղջիկներուն եւ կամ ՀՄԸՄ ՆՈՒՊԱՐԻ եւ Հ.Մ.Ը.Մ. Արարատի մրցումը Կիրակի օր խաղացուէր:

Յաջորդ մրցաշարքերուն տարբեր կարգադրութիւն պէտք է ըլլայ, այս տեսակ անյարմար կացութեան առաջքը առնելու համար:

Օրուան երկրորդ մրցումը Գահիրէի ՀՄԸՄ ՆՈՒՊԱՐԻ եւ Արարատի տղոց խումբերուն միջեւ էր: Հակառակ որ ՀՄԸՄ ՆՈՒՊԱՐԻ տղաքը ուժեղ սկզբնաւորութեամբ շշմեցուցին մրցակից խումբը, սակայն Արարատի տղաքը շուտով գտան իրենց հաւասարակշռութիւնը եւ առաջին քառորդախաղը աւարտեցաւ 22-



20 արդիւնքով, ի նպաստ ՀՄԸՄ ՆՈՒՊԱՐ-ին: Մրցումը շատ տաք էր ու սիրտհատնում կը պատճառէր երկու կողմերու համակիրներուն: Յանկարծ խառնաշփոթութիւն մը սկսաւ ՀՄԸՄ ՆՈՒՊԱՐի խումբին մէջ, մարզիկները քանի կ'աճապարէին արդիւնքի առաւելութիւն արձանագրելու, այնքան սխալ կ'ըլլային իրենց անցումներն ու արձակումները: Ամէն մարզիկ, մէկդի դնելով հաւաքական խաղի դրութիւնը, հեռուներէն անյաջող արձակումներ ընելով կը վնասէր խաղին: Պէտք է ընդունիլ որ Արարատի մարզիկներն ալ նոյնքան սխալներ կ'ընէին, սակայն ՀՄԸՄ ՆՈՒՊԱՐին սայթաքումները նպաստեցին, որ Արարատի տղաքը յաղթական հանդիսանան, 55-53 արդիւնքով:

Գիշերը, Յառաջդիմասէրի պարտէզին մէջ խնճոյք մը կազմակերպուած էր, ուր մեծ թիւով հանդիսատեսներ ու մարզիկներ համտեսեցին ազատ շքասեղանին հրամցուցած ուտելիքները:

Կիրակի օրուան առաջին մրցումը Արարատի եւ Կամքի աղջիկներուն միջեւ էր, որուն ընթացքին Արարատի մեղմ խաղարկութիւնը սատարեց, որ արդիւնքի տարբերութիւնը շատ մեծ չըլլար ու անոնք յաղթեցին 54-39 արդիւնքով:

Տրուած ըլլալով որ ՀՄԸՄ ՆՈՒՊԱՐի

երկսեռ մարզիկները արդէն իսկ մեկնած էին Գահիրէ, նախկին մարզիկուհի Ալիսա Տեփոյեան-Արթինեան, աղջիկներու խումբին փոխարէն ստացաւ բաժակը, որ նուիրուած էր տէր եւ տիկին Կարօ Խանճեանի կողմէ:

Տղոց աւարտական մրցումը Արարատի եւ Կամքի խումբերուն միջեւ էր. Կամքի տղաքը բաւական լաւ խաղարկութիւն ցուցաբերեցին: Խաղը աւարտեցաւ ի նպաստ Արարատին, 60-55 արդիւնքով ու անոնք ստացան բաժակը, նուիրուած տիար Զաւէն Լէյլէկեանի կողմէ:

Երկու տարիէ ի վեր ակումբներուն քով սովորութիւն ստեղծուած է հեռարձակմամբ մրցաշարքերուն բոլոր խաղերը սփռել, առիթ ընծայելու համար բացակայ մարզասէր հասարակութեան, ըլլան անոնք Եգիպտոսի մէջ թէ արտասահման, հետեւիլ եգիպտահայ գաղութին աւանդական մրցաշարքերուն: Կամքի վարչութիւնը, առանց ո'չ մէկ պատճառ յայտնելու, զանց առաւ շարունակելու այս սովորութիւնը:

Մաղթենք որ յաջորդ մրցաշարքերը առցանց սփռուին:

*Սօսի Ներսիսեան-Յակոբեան
Օգոստոս 2025*

ԳԻՐՔԵՐՈՒ ՔԱՂԱՔ

Հարաւային Քորէայի գիրքերու քաղաքը՝ Փաժուն (Paju) կը գտնուի Սէուլէն հիւսիս-արեւմուտք. հոն կը գործեն մօտաւորապէս 900 առեւտրական մեծ ու փոքր հաստատութիւններ, գիրքերու եւ գիրքեր պատրաստելու գործընթացին առնչուած:

Այս քաղաքը ինքնուրոյն համալիր մըն է, որ նուիրուած է հրատարակչութեան եւ գիրքերուն, եւ կ'առանձնանայ իր հետաքրքրական ճարտարապետութեամբ, գրադարաններով եւ թանգարաններով: Թէեւ երբեմն կրնայ «ուրուական քաղաք» թուալ, յատկապէս աշխատանքային օրերուն, սակայն սիրուած վայր մըն է գրքասէրներուն համար, յատկապէս ընտանիքներու հանգիստի օրերուն: Այցելուները շատ կը սիրեն ճարտարապետութիւնը, «Իմաստութեան անտառ» կոչուած գրադարանը եւ տպագրական թանգարանը:





Հ.Մ.Ը.Մ. ԱՐԱՐԱՏԻ ՏԱՐԵԿԱՆ ՄՐՑԱՇԱՐՔԸ

Ուրբաթ 3, Շաբաթ 4 եւ Կիրակի 5 Հոկտեմբեր 2025-ին տեղի ունեցաւ Հ.Մ.Ը.Մ. Արարատի տարեկան եգիպտահայ պասքէթ-պոլի մրցաշարքը, հովանաւորութեամբ Տ. Աշոտ Ս. Եպս. Մնացականեանի՝ բարեխնամ Առաջնորդ Եգիպտոսի Հայոց Թեմին: Մրցաշարքին նախագահութիւնը ստանձնած էր տիկին Շաքէ Յովակիմեան, ի յիշատակ իր ամուսնոյն տիար Պերճ Յովակիմեանի:

Ուրբաթ օրուան առաջին մրցումը հիւրընկալ ակումբին 14 տարեկանէն վար աղջիկներուն եւ Ղապա ակումբին միջեւ խաղն էր. Արարատի պարմանուիկները դիրքին յաղթանակ մը տարին եւ ստացան բաժակը, որ նուիրած էին տէր եւ տիկին Զարեհ Մուրատեանները:

Երկրորդ մրցումը Հ.Մ.Ը.Մ. Արարատի եւ Սրբուհի Թերեզայի երէց տղոց խումբերուն միջեւ էր: Քանի մը տարի առաջ, Սրբուհի Թերեզայի խումբին նոր, երիտասարդ մարզիկները միանալով, բարձրացուցած էին անոր մակարդակը: Սակայն վերջերս, զանազան պատճառներով, խումբը կրկին անկումի ենթարկուած էր: Միակողմանի խաղը աւարտեցաւ ի նպաստ Արարատի, 85-48 արդիւնքով:

Վերջին մրցումը երկու ՀՄԸՄ ՆՈՒՊԱՐԻ խումբներուն երէց տղոց միջեւ էր. Աղեքսանդրիոյ խումբէն երեք մարզիկներ կը բացակայէին: Խաղը միակողմանի էր ու ծանծրալի, եւ սկիզբի քանի մը վայրկեաններէն ետք չկարողացաւ հանդիսատեսներուն ուշադրութիւնը գրաւել: Մրցումը աւարտեցաւ 82-28 արդիւնքով, ի նպաստ Գահիրէի ՀՄԸՄ ՆՈՒՊԱՐԻ:

Շաբաթ օրուան առաջին մրցումը Հ.Մ.Ը.Մ. Արարատին 14 տարեկանէն վար տղոց եւ Թայարանի խումբերուն միջեւ էր: Արարատի պատանիները ինքնավստահ խաղով կրցան դիրքին յաղթանակ մը ձեռք ձգել եւ ստացան բաժակը, որ նուիրած էին տէր եւ տիկին Վրէժ Զիլինկիրեանները:

Երկրորդ խաղը Գահիրէի ՀՄԸՄ ՆՈՒՊԱՐԻ եւ Հ.Մ.Ը.Մ. Կամքի երէց աղջիկներուն միջեւ էր. Կամքին պահեստի մարզիկուիկներու չգոյութեան պատճառով, անոնք չկարողացան տոկալ մրցակից խումբին լաւ կազմակերպուած մարզիկուիկներուն դիմաց: Մրցումը աւարտեցաւ 75-29, ի նպաստ ՀՄԸՄ ՆՈՒՊԱՐԻ աղջիկներուն:

Վերջին մրցումը ՀՄԸՄ ՆՈՒՊԱՐԻ եւ Հ.Մ.Ը.Մ. Կամքի երէց տղոց խումբերուն միջեւ էր: Մինչեւ երկրորդ քառորդախաղին աւարտիլը, Կամքի մարզիկները բաւական լաւ դիմադրութիւն ցուցաբերեցին, սակայն անոնք չկրցան դիմադրել ՀՄԸՄ ՆՈՒՊԱՐԻ արագ յարձակումները ու մրցումը աւարտեցաւ 80-55, ի նպաստ ՀՄԸՄ ՆՈՒՊԱՐԻ:

Կիրակի օրուան յայտագրին առաջին մրցումը ՀՄԸՄ ՆՈՒՊԱՐԻ եւ Հ.Մ.Ը.Մ. Արարատին աղջիկներուն միջեւ խաղն էր: Հակառակ որ Արարատի խումբը պահեստի շատ մարզիկուիկներ ունի, սակայն բուն հինգ խաղացողներէն զատ կարելի չէ խաղը վստահիլ անոնց: Առաջին իսկ վայրկեանէն ՀՄԸՄ ՆՈՒՊԱՐԻ խումբը, իր գերազանց խաղարկութեամբ, շփոթութեան մատնեց մրցակից մարզիկուիկները: Չորրորդ քառորդախաղի աւարտին երկու վայրկեան կը մնար, երբ Արարատի մարզիկուիկներէն մէկը, որ արդէն ժամանակէ մը ի վեր ծունկի խնդիր ունէր, իր նստած տեղէն կայնելու ժամանակ պոռաց ու սայթաքեցաւ: Խնդիրը լուրջ ըլլալուն անմիջապէս շտապօգնութիւն կանչուեցաւ ու զինք հիւանդանոց փոխադրեցին: Խաղին արդիւնքը 57-22 էր, ի նպաստ ՀՄԸՄ ՆՈՒՊԱՐԻ աղջիկներուն:

Երկու խումբերուն մարզիկները համաձայնեցան խաղը աւարտած նկատել: ՀՄԸՄ ՆՈՒՊԱՐԻ խմբապետուհի Լորիկ Տրդատեան ստացաւ բաժակը, որ նուիրած էին տէր եւ տիկին Սիմոն Զամբերթեանները: Վարձքը կատար խումբին պատասխանատու Սեւան Տրդատեանին եւ օգնական Արեգ Աբգարեանին, այս յաղթանակին համար:

Տրուած ըլլալով որ նախորդ մրցաշար-



քին Հ.Մ.Ը.Մ. Արարատը յաղթական հանդիսացած էր, ՀՄԸՄ ՆՈՒՊԱՐԻ տղաքը վճռած էին խլել բաժակը: Խաղը սկսաւ շատ տաք ու հետաքրքրական, մէկ պասսէժ հոս, մէկ պասսէժ հոն, սակայն յայտնի էր ՀՄԸՄ ՆՈՒՊԱՐԻ գերազանցութիւնը: ՀՄԸՄ ՆՈՒՊԱՐԻ տղաքը հետզհետէ թիւի առաւելութիւն բացին ու պահեցին զայն մինչեւ խաղին աւարտիլը. արդիւնքը 62-47 էր, ի նպաստ իրենց: Խմբապետ

Արամ Աբիկեան ստացաւ բաժակը, որ նուիրած էին տէր եւ տիկին Մանուկ Պօհճալեանները:

Վարձքը կատար խումբին պատասխանատու Ռուբէն Սիմոնեանի եւ օգնականներ Ժիրայր Սուլթանեանի եւ Արմէն Իրատեանի, այս յաղթանակին համար:

*Սօսի Ներերեան-Յակոբեան
Հոկտեմբեր 2025*



ԳԱՀԻՐԷԻ ՀՄԸՄ ՆՈՒՊԱՐԻ ՏԱՐԵԿԱՆ ՄՐՑԱՇԱՐՔԸ

Ուրբաթ, 17 Հոկտեմբեր 2025-ին սկսաւ Գահիրէի ՀՄԸՄ ՆՈՒՊԱՐԻ պասքէթ-պոլի միջակումբային տարեկան մրցաշարքը, մասնակցութեամբ հինգ մարզական ակումբներուն երկսեռ խումբերուն:

Մրցաշարքը կը հովանաւորէր Գերշ. Տ. Աշոտ Եպս. Մնացականեան՝ բարեխնամ առաջնորդ Եգիպտոսի հայոց թեմին, իսկ նախագահութիւնը ստանձնած էին տոքթ. եւ տիկին Կարօ Աբգարեան:

Յայտագրին առաջին մրցումէն ժամ մը առաջ, mini basketballի խաղ մը սկսաւ՝ ՀՄԸՄ ՆՈՒՊԱՐԻ 10-12 տարեկան աղջիկներն ու տղաքը բարեկամական մրցումներ խաղացին Մատինադ Նասր ակումբին փոքրիկներուն դէմ: Դաշտին մէկ կէսին վրայ երեք երեքի դէմ աղջիկները խաղացին, իսկ միւս կէսին վրայ նոյն դրութեամբ, տղաքը: Պէտք է ընդունիլ որ աղջիկները տակաւին շատ փորձի կը կարօտէին, սակայն տղաքը շատ ինքնավստահ էին եւ դիւրին յաղթանակ մը տարին: Վարձքը կատար խումբին պատասխանատու Անի Թաշճեանին, իր տարած դժուարին աշխատանքին համար:

Մրցաշարքին առաջին մրցումը ՀՄԸՄ ՆՈՒՊԱՐԻ եւ Հ.Մ.Ը.Մ. Կամքի երէց աղջիկներուն միջեւ էր: Հակառակ որ Կամքի խումբը շատ ներդաշնակ էր ու կազմակերպուած, սակայն իրենց թիւին պակասը արգելք հանդիսացաւ որ տոկան ՀՄԸՄ ՆՈՒՊԱՐԻն աղջիկներուն դիմաց: Մրցումը աւարտեցաւ ի նպաստ հիւրընկալ խումբին, 61-33 արդիւնքով:

Երկրորդ մրցումը Հ.Մ.Ը.Մ. Արարատի

եւ Հ.Մ.Ը.Մ. Կամքի երէց տղոց միջեւ էր: Կամքը սկիզբը բաւական լաւ դիմադրութիւն ցոյց տուաւ, սակայն ի վերջոյ Արարատը յաղթական հանդիսացաւ 54-35 արդիւնքով:

Վերջին խաղը՝ ՀՄԸՄ ՆՈՒՊԱՐԻ եւ Սրբուհի Թերեզայի երէց տղոց խումբերուն միջեւ սաստիկ միակողմանի էր սկիզբէն մինչեւ վերջ: Հակառակ որ ՀՄԸՄ ՆՈՒՊԱՐԻ մարզիչը խաղին մեծ մասը վստահեցաւ պահեստի խաղացողներուն, սակայն արդիւնքի շատ մեծ տարբերութեամբ յաղթական հանդիսացաւ հիւրընկալ խումբը:

Շաբաթ, 18 Հոկտեմբերի յայտագրին վրայ ՀՄԸՄ ՆՈՒՊԱՐԻ 16 տարեկանէն վար տղոց եւ աղջիկներուն մրցումները կային: Նախ ակումբին պատանիները մրցեցան «Հելիոպոլիս» ակումբին դէմ: ՀՄԸՄ ՆՈՒՊԱՐԻ տղաքը, իրենց ինքնավստահ եւ արագ խաղարկութեամբ, սկիզբէն իսկ տիրապետեցին խաղին, արդիւնքի անհասանելի տարբերութիւն բացին եւ յաղթական հանդիսացան: Խմբապետ Մանօ Եուսէֆ ստացաւ բաժակը, որ նուիրած էին տէր եւ տիկին Մանուէլ Աւետիսեան: Վարձքը կատար խումբին պատասխանատու Ռոպէռ Թաշճեանին, իր տարած աշխատանքին համար: Այս խումբէն լաւ մարզուած պատանիները շուտով պիտի միանան երէց տղոց:

Յաջորդ խաղը ՀՄԸՄ ՆՈՒՊԱՐԻ 16 տարեկանէն վար աղջիկներուն եւ Ալ Ղապա ակումբին միջեւ էր: Մրցակից խումբին բարձրահասակ ու յաղթանդամ





մարզիկուհիներուն դիմաց շատ փոքրիկ կ'երեւէին ՀՄԸՄ ՆՈՒՊԱՐԻ պարմանուհիները, սակայն անոնք իրենց արագ եւ անվրէպ խաղարկութեամբ հետզհետէ պասքէթներ արձանագրեցին եւ շուտով թիւի առաւելութիւն ձեռք ձգեցին: Մրցումը աւարտեցաւ ի նպաստ ՀՄԸՄ ՆՈՒՊԱՐԻ պարմանուհիներուն: Խմբապետուհի Էրիքա Քումրուեան ստացաւ բաժակը, որ նուիրած էին տէր եւ տիկին Յակոբ Մանուկեան: Վարձքը կատար խումբին պատասխանատու Տիանա Աւագեանին, որուն ջանքերուն կը պարտի այս յաղթանակը:

Օրուան վերջին մրցումը Աղեքսանդրիոյ ՀՄԸՄ ՆՈՒՊԱՐԻ եւ Հ.Մ.Ը.Մ. Արարատին երէց տղոց միջեւ էր: Հակառակ որ մինչեւ երկրորդ քառորդախաղին աւարտիլը ՀՄԸՄ ՆՈՒՊԱՐԻ մարզիկները կրցած էին բուռն դիմադրութեամբ արդիւնքի տարբերութիւնը ցած պահել, սակայն պահեստի լաւ մարզիկներու չգոյութեան պատճառով չկարողացան դիմանալ: Մրցումը աւարտեցաւ 61-47, ի նպաստ Արարատին:

Կիրակի, 19 Հոկտեմբերին, նախքան աւարտական մրցումներուն սկսիլը, ՀՄԸՄ ՆՈՒՊԱՐԻ 6-10 տարեկան տղաքն ու աղջիկները՝ Micro team, իրենց միջեւ մրցումներ խաղացին, արժանանալով ներկաներուն քաջալերութեան: Շատ հաճելի էր տեսնել փոքրիկ մարզիկներէն ոմանք, որոնք ինքզինքնուն մեծի հովեր տալով կը խաղային ինքնավստահօրէն: Վարձքը կատար խումբին պատասխանատու Անի Թաշճեանին, որուն համբերատար մօտեցումը փոքրիկներուն հան-

դէպ մեծապէս գնահատելի է:

Երէց աղջիկներուն աւարտականը ՀՄԸՄ ՆՈՒՊԱՐԻ եւ Հ.Մ.Ը.Մ. Արարատին միջեւ սկսաւ բաւական հաւասարակշռուած. առաջին քառորդախաղին աւարտին արդիւնքի տարբերութիւնը շատ չէր: Սակայն, հետզհետէ, ՀՄԸՄ ՆՈՒՊԱՐԻ աղջիկները իրենց ստոյգ արձակումներով սաստիկ առաւելութիւն ձեռք ձգեցին, այն աստիճան որ մարզիչը լաւագոյն մարզիկուհիները փոխարինեց պահեստիներով: Երբ մրցումը աւարտեցաւ, արդիւնքը 81-44 էր, ի նպաստ ՀՄԸՄ ՆՈՒՊԱՐԻ խումբին: Խմբապետուհի Լորիկ Տրդատեան ստացաւ բաժակը, որ նուիրած էին տէր եւ տիկին Ժան-Փիլեռ Աւագեան: Վարձքը կատար խումբին պատասխանատու Սեւան Տրդատեանին եւ իր օգնական Արեգ Աբգարեանին:

Մրցաշարքին վերջին մրցումը ՀՄԸՄ ՆՈՒՊԱՐԻ եւ Հ.Մ.Ը.Մ. Արարատի երէց տղոց խումբերուն միջեւ էր: Նախորդ մրցաշարքին բաւական դիւրին յաղթանակ մը տարած էին ՀՄԸՄ ՆՈՒՊԱՐԻ տղաքը եւ ինքնավստահ դաշտ իջան անոնք: Իսկ Արարատի տղաքը որոշած էին սրբագրել նախորդ անգամուան սխալները ու տիրանալ բաժակին:

Խաղը սկսաւ սաստիկ արագ եւ երկու խումբերուն սխալները եղան անպակաս: Ստոյգ արձակումներ կը ծախողէին, սխալ անցումներ գնդակը դուրս կը հանէին դաշտէն, կոպիտ խաղարկութեան պատճառով խաղը կանգ կ'առնէր: ՀՄԸՄ ՆՈՒՊԱՐԻ տղաքը քանի մը անգամ կազմակերպելով իրենք-զիրենք, տասը թիւի առաւելութիւն բանալէ ետք, Արարատի



տղաքը շուտով կը հասնէին ու կ'անցնէին: Հանդիսատեսներուն, մարզիչներուն ու խաղացողներուն ջիւղերը քայքայումի վրայ էին մրցումին ամբողջ տեւողութեան ընթացքին: Խաղը աւարտելուն կը մնար քանի մը երկվայրկեան ու ՀՄԸՄ ՆՈՒՊԱՐԻ խումբը երկու թիւի առաւելութիւն ունէր, երբ անտեղի սխալի մը պատճառով գնդակը անցաւ Արարատի տղոց ձեռքը ու անոնք երկու թիւ արձանագրելով հաւասարեցուցին արդիւնքը 60-60ի: Պէտք եղաւ յաւելեալ 5 տաժանակիր վայրկեաններ դիմանալ, որոնք երկարեցան 10 վայրկեանի: Վերջապէ՛ս, կէս գիշերը անց, մրցումը աւարտեցաւ ի նպաստ ՀՄԸՄ ՆՈՒՊԱՐԻ, 65-64 արդիւնքով: Խմբապետ Արամ Աբիկեան ստացաւ բաժակը, որ նուիրած էին ՀԲԸՄիութեան Գահիրէի մասնաճիւղի ատենապետ

դոկտ. Ճորճ Սիմոնեան եւ ազնիւ տիկինը: Վարձքը կատար խումբին պատասխանատու Ռուբէն Սիմոնեանին, նաեւ օգնականներ Ժիրայր Սուլթանեանին եւ Արմէն Իրատեանին:

Տիկին Մարլին Աւանեան մրցաշարքին երեք օրերուն ընթացքին հանդիսավարի դերը կատարեց յաջող կերպով: Անիկա ՀՄԸՄ ՆՈՒՊԱՐԻ վարչութեան անունով շնորհակալութիւն յայտնեց Գերշ. Տ. Աշոտ Եպս. Մնացականեանին, ՀԲԸՄի Տեղական եւ Շրջանակային Յանձնաժողովներուն, տոքթ. եւ տիկին Կարօ Աբգարեանին, բաժակներ նուիրողներուն եւ նուիրատուներուն: Ան նաեւ անդրադարձաւ Գեղամ Կարսեանի աշխատանքին, որ իր մասնագիտական ուղիղ հեռարձակմամբ եւ ցուցատախտակի համակարգով խաղերը դարձուցած էր աւելի հետաքրքրական: Ան յիշեց նաեւ DJ Ռուպէն Թաշճեանի դերը, որ իր հնչեցուցած ընտրեալ երգերով ու երաժշտութեամբ խանդավառած էր մրցաշարքը:

Վերջապէս շնորհակալութեան խօսք արտասանուեցաւ տիար Վարդ Ալեքսանեանին, որ նուիրած էր մրցաշարքին մէտայլները:

Սօսի Ներերեան-Յակոբեան Հոկտեմբեր 2025





ՇՆՈՐՀԱԿԱԼՈՒԹԻՒՆ

Շնորհակալություն տիկին Աննա Տոլապճեան-Թրայեանին, «Երուանդ Գ. Աղաթօն» գրադարանին նուիրած տասնեակ մը գիրքերուն համար:

Շնորհակալություն Արփի Խաչերեանին, իր մօր՝ ողբացեալ Արաքսի Տէրունեան-Խաչերեանի հայերէն գիրքերն ու մամուլը «Երուանդ Գ. Աղաթօն» գրադարանին պահ տալուն համար:

Մամուլի հաւաքածոն կը պարփակէ Յառաջ օրաթերթը (Փարիզ) Նայիրի շաբաթաթերթը (Պէյրուս), Սիոն (Երուսաղէմ), Անի (Պէյրուս), Հոկտեմբեր (Գահիրէ), եւ AIM (ԱՄՆ) ամսագրերը:

Շնորհակալություն տիկին Մանուշ Զոփուրեան-Թէրզիպաշեանին, որ գրադարանիս առաջին նուիրատուներէն եղած է, ատենին իր նուիրած բազմաթիւ գիրքերուն համար:

Աղաթօն գրադարանը իր խորին շնորհակալութիւնները կը յայտնէ տիկ. Ալիս Մատղաշեան-Ճիզմէճեանին, իր ամբողջ գրադարանը մեզի վստահելուն համար:

Շնորհակալություն տիկին Նուարդ Պոյաճեանին, տասնեակ մը գիրքեր Աղաթօն գրադարանին նուիրելուն համար:

